Ե. ՏԱՐԻ 1450 ԹՒՆ ՀԱՅՈՑ 4330 ՍԱՀՄԻ 24 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1888 (Ն. Տ.) 14 ՆՈՅԵՄԲԵՐ 1888 9 ՌԷՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1306

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան–խան

غلطه‌ده نورادونكيان خاننده آره‌ولك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	160
» »	Վեցամսեայ	80
» »	Եռամսեայ	40
Գաւառաց »	Տարեկան	200
» »	Վեցամսեայ	100
Օտար երկիրներէ	տարեկան ֆրանք	56
»	վեցամսեայ »	28

Դուրս գրկուած լրագրոյ համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան գրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԶԵՂՉ ԳԱՒԱՌԱՑԻՆ ԲԱԺՆԵԳՆՈՑ ՎՐԱՅ

Նկատելով որ Օսմանեան Թղթատարական Վարչութեան նոր կարգադրութեանց շնորհիւ գաւառային սակագինք չափաւորուած են, եւ փափաքելով նոր դիւրութիւն մ'ընծայել մեր գաւառացի բաժանորդաց, ներկայ Նոյմ. 1էն սկսող տարեկան բաժանորդագրութիւններէն 40 դրուշ զեղչած ենք, որով «Արեւելք»ի գաւառային տարեկան բաժնեգինն է այսուհետեւ տասն մեճիտ և վեցամսեայն հինգ մեճիտ։

Այս առթիւ կը յիշեցնենք թէ գաւառներէն լրագիր խնդրողներ իրենց յանձնարարութեան հետ միատեղ բաժնեգինն ալ կանխիկ պէտք է ղրկեն։ Այս պայմանին հակառակ յանձնարարութիւնք չեն գործադրուիր։

Կ. ՊՈԼԻՍ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, 1888

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԱԿԱՐ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՌՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐ ՀԵՏ

Առասպել մը կը պատմուէր երբեմն, երբ թէ Վեհ. Մակար կաթողիկոս Ռուսիոյ մարդն է եղեր, և Հայոց Եկեղեցին ռուսացնելու համար Զարին կողմէ կաթողիկոս անուանուեր է։ Առասպել կ'ըսենք այն տեսակ պատմութեանց որոց չեն հաւտար պատմողներն անգամ։ Եւ, չիտակն ըսելով, մեր յիշած առասպելն ալ այս մասին տարբեր չէր ուրիշ առասպելներէ։ Որովհետեւ Զարը չվաւերացուց Մելքիսեդեկ Սրբազանին ընտրութիւնն, և ի գործ դրաւ իրաւունք մը զոր յիսուն տարի յառաջ իւր օրինաց մէջ նշանակելու հոգն ստանձնած էր, կը հետեւէր թէ Մակար Սրբազան Ռուսիոյ մարդն էր։ Այս եզական տրամաբանութեան դէմ ի զուր էր առարկել թէ Մելքիսեդեկ Սրբազան կրնար անհաճոյ եղած լինել ռուս կառավարութեան, և Զարն անհաճոյ մարդու մը կրնար նախադասել մարդ մը որ ո՛չ անհաճոյ լինելու առաւելութիւնն ունեցած էր, ո՛չ ալ հաճոյ լինելու անպատեհութիւնն։ Հակաճակարեանք չէին ձանձրանար միշտ նոյն առասպելը պատմելէ։ Ցուսահատած էինք զիրենք ըմբերանելէ։

Բայց իրողութիւններ կան որք ամենէն համոզիչ փաստերէն աւելի պերճախօս են։ Եւ Վեհ. Տ. Մակար կաթողիկոսի գահակալութենէն ի վեր տեղի ունեցած կարգ մը իրողութիւնք պէտք է բացած լինին ամենանոց աչքերն որք՝ առանց կուսակցական կիրքերէ մղուելու՝ անկեղծ համոզմամբ հակառակ էին Ն. Վեհափառութեան կաթողիկոսանալուն։ Եթէ Մակար կաթողիկոս Ռուսիոյ մարդն էր և Հայ Եկեղեցին ռուսացնելու համար Զարէն անուանուած էր, պէտք էր որ իւր բովանդակ իշխանութեան միջոցին ռուս կառավարութեան յանձնած լինէր ազգային իրաւունք մը կամ հաստատութիւն մը, զոր իւր բոլոր ոյժն ի գործ դնելով հայ կաթողիկոս մը կրնար պահպանել։ Պէտք էր որ անտարբեր մնացած լինէր պահպանելու և պաշտպանելու ինչ որ Ռուսք իրենց ձեռքն անցունել կ'ուզէին։ Պէտք էր որ այնպիսի ռուսանուէր կաթողիկոս մը բնաւ հոգ տարած չլինէր այն Եկեղեցւոյ պայծառացման ու զօրացման որ Հայրապետ կը կոչուէր։ Պէտք էր, վերջապէս, որ Ռուսիա իւր շնորհներով լնուր իւր անուանած կաթողիկոսը։ Բայց իրօք այսպէ՞ս եղաւ Մակար կաթողիկոս։

Տեսանք, ընդհակառակն, թէ Ռուսիոյ աւելի խստիւ վարուեցաւ այս կաթողիկոսին հետ քան այն կաթողիկոսաց հետ ոյց ընտրութիւնն աւելի համաձայն էր ազգային աւանդութեանց։ Տեսանք թէ Ռուսք գանգատեցան Մակար կաթողիկոսէն թէ «Թուրքիայէն եկած կաթողիկոսները մուզցուղ»։ Տեսանք թէ իւր պաշտօնավարութեան սկիզբէն ի վեր Մակար կաթողիկոս անընդհատ բանակցութեանց մէջ գտնուեցաւ կայսերական կառավարութեան հետ, դպրոցական և վանական առկախ խնդրոց լուծման համար։ Տեսանք թէ մանաւանդ փակեալ վարժարանաց վերաբացման համար բատ կարի Նպաստաւոր կարգադրութիւն մը ձեռք բերելու մասին բան մը զանց չըրաւ։ Տեսանք նաեւ թէ Մայր Աթոռն և Ճեմարանը պայծառացնելու և աւելի բարեկարգ վիճակի մէջ դնելու համար միջոցներ ձեռք առաւ բոլորովին երիտասարդական կորովով մը։ Վերջապէս, տեսանք թէ Թուրքիոյ Հայոց Արարատեան Մայր Աթոռոյ հետ կապակցութիւնն հաստատ պահելու համար ո՛ եւ է առիթ ձեռքէ չհանեց։ Այսպիսի Հայրապետ մը կրնայ իւր մարդկային թերութիւններն ունենալ. բայց ըսել թէ այսպիսի Հայրապետ մը Ռուսիոյ մարդն է, և Հայոց Եկեղեցին ռուսացնելու պաշտօն ունի, ո՞չ ապաքէն հայ ժողովրդեան քթին խնդալ է։

Վեհ. կաթողիկոսին Ռուսիոյ կայսեր հետ տեսակցութիւնը նոր իրողութիւն մ'է. կաթողիկոսին ռուս կառավարութեան հանդէպ ունեցած դիրքն ի վեր հանող։ Իբրեւ իւր Եկեղեցւոյն և Ազգին ճշմարիտ պէտքերն իմացող Հայրապետ մը, Վեհ. Մակար Սրբազան, թարգմանութեամբ Տփղիսի Առաջնորդ Սեդրակեան Գեր. Արիստակէս եպիսկոպոսի, Զարին կը խօսի իրեն և կաւկասեան կառավարութեան միջեւ անլոյծ մնացած խնդրոց վրայ, և կը յաջողի Նպաստաւոր խոստումներ ստանալ այնպիսի Վեհապետէ մը որ գիտէ իւր խոստումը յարգել։ Այս պարագայք պատմուած են լրագրոյս Հոկտ. 29 շաբաթ աւուր թուով հրատարակեալ ուշագրաւ թղթակցութեան մը մէջ, որ վայելուչ ոճով մը ի վեր կը հանէր Զարին ի Կաւկասիա ուղեւորութեան կարեւորագոյն պարագայները։ Մեր յարգոյ թղթակից կը գրէր․

Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքն կարեւոր ունկնդրութիւն մ'ունեցաւ Ամենայն Ռուսիոյ Ինքնակալին քով որու վրայ լռեցին տեղական լրագիրք։ Այս ունկնդրութիւնն որոշուած էր առաջին պաշտօնական ներկայացման ժամանակ, նոյն իսկ Կայսեր բաղձանքով։ Զարի խնդրանօքը, Մակար կաթողիկոս կ'օրհնէ Արքայական Իշխաններն, ամենայն յաջողութիւն և երջանկութիւն մաղթելով նոցա և ծնողացը։ Այս ակնարկութիւններ Կայսեր կողմէն Կաթողիկոսի և Կովկասի կառավարչապետ Իշխան Դոնդուկով Կորսակովի մէջ եղած ծանօթ տարաձայնութեանց մասին և Վեհ. Մակար Սրբազան կը յայտնէ իւր խնդիրքն՝ ազգային հոգեւոր դպրոցաց ծրագրացն և նոցա վրայ իւր իշխանութեան ընդարձակման և վանական կալուածոց պիտոյից վերաբերեալ և ի հարկէ այլ առարկայից նկատմամբ եւս, որոնք մեզ անյայտ են դեռ։ Ռուսիոյ Ինքնակալը կը խոստանայ կատարել և երբ Աղեքսանդր Գ. խոստանայ, նա իւր կատարումը չյապաղեր, ուստի մեզ կը մնայ սպասել և յուսալ, միայն թէ ուշադրութեան արժանի կէտ մի չենք ուզեր լռելեայն անցնիլ։ Կայսրն իւր այս ուղեւորութեան միջոցին առատ շքանշաններ, թանկագին ընծաներ և իւր համակրանաց յիշատակներ է բաշխած թէ պաշտօնեայ և թէ անպաշտօն անձանց, մանաւանդ ժողովրդական ներկայացուցիչներուն։ Կ'սպասուէր որ Հայոց Կաթողիկոսն որ և է համակրական կամ յարգանաց ցոյցի արժանանայ, բայց այդ ցոյցը լոկ արտաքին ձեւակատարութիւններէ անդին չանցաւ, և այս այնքան առաւել, որ իբրեւ կաթողիկոս Մակար Սրբազան առաջին անգամ կը ներկայանար Կայսեր։ Այսու ամենայնիւ մենք կատարեալ գոհ կը մնանք եթէ աղերսուած քանի մը կարեւոր արտօնութիւնները շնորհուին։ Իսկ այդ մասին կէտը զայն միայն ապացուցանելու կը ծառայէ թէ ինչ որ արտաքին երեւոյթով՝ պաշտպանել կ'երեւար կամ կը [illegible], նա իրօք պաշտպանութիւն չվայելեր։

Ցարգոյ թղթակցին դիտողութիւնը շատ ուղիղ է։ Եթէ Մակար Ռուսիոյ մարդն է և հակազգային Նպատակաւ մը բռնաճօրէն անուանուած է Զարէն, պէտք չէ՞ր միթէ որ Ամենայն Ռուսաց միահեծան Ինքնակալն առիթէն օգուտ քաղէր իւր բացառիկ շնորհաց արժանացնելու իւր պաշտպանութիւնը վայելող կաթողիկոս մը։ Բայց և ո՛չ իսկ երկրորդական պատուանշանի մը արժանի կը համարուի Հայոց կաթողիկոսն։ Հայք շատ փոյթ չեն ըներ իրենց կաթողիկոսին կուրծքը ռուսական պատուանշաններով ծածկուած տեսնելու․ Հայք շատ աւելի ուրախ կը լինին եթէ Ռուսիոյ կայսրն, իւր արդարասէր ոգւով, գոհացնէ իրենց կաթողիկոսին օրինաւոր խնդիրքը, թէեւ արտաքին սին պատիւներէ զուրկ թողլով զնա։ Բայց այս իրողութիւն եւս ապացոյց է թէ Մակար կաթողիկոս շնորհ չի վայելեր Ռուսիոյ կառավարական բարձրագոյն ակմբոց մէջ, ճիշդ այն պատճառաւ անշուշտ որ հլու գործիք մը չէ Թոլսթոյներու, Տոնտուքով-Քորսաքովներու և Եանովսքիներու ձեռաց մէջ, և ընդհակառակն գիտէ դէմ դնել անոնց։

Միւս կողմէ, Վեհ. Զարն Աղեքսանդր Գ ա՛յնչափ իմաստուն աշխարհավար մ'է որ քաջ գիտէ թէ Հայոց կաթողիկոս մը, իւր խնամոց յանձնեալ այնչափ կարեւոր շահերով, անկարող է տարբեր ընթացքի մը հետեւիլ, և թէ Էջմիածնայ Գահակալին պաշտօնը կը պահանջէ իւր հովուապետութեան յանձնեալ աւանդական հաստատութիւններն անվթար պահել և զարգացնելու ջանալ։ Ուստի, չենք կարծեր թէ Վեհ. Մակար կաթողիկոսին կաւկասեան իշխանութեանց հետ յարաբերութեանց վիճակին վրայ Տոնտուքով-Քորսաքով Իշխանին կողմէ ո՛ և է տեղեկագրութիւն Հայոց Հայրապետին դէմ Ռուսիոյ օգոստափառ Ինքնակալին սիրտը դառնացնելու հետեւանքն ունենայ։ Ընդհակառակն, լիայոյս ենք թէ այնպիսի վեհանձն Ինքնակալ մը, իբրեւ իւր Տէրութեան ամենէն աւելի պատուաւոր մարդը, վարպապար խօսք չի տար, և տուած խոստումը գործադրել իրեն համար նուիրական պարտաւորութիւն կը համարի։ Եւ գոհացնելով Հայոց կաթողիկոսին օրինաւոր և չափաւոր խնդիրքն, որ նոր բան մը չի հայցեր, այլ Ն. Կ. Վեհափառութեան հօր և մեծհօր օրով հայ հպատակաց արդէն վայելած իրաւանց անփոփոխ պահպանման ևեթ կը փափաքի, Վեհ. Զարը գիտէ թէ իւր գահուն հետ աւելի սերտիւ պիտի կապէ իւր միլիոն ու կէս հայ հպատակաց սիրտերը։

Որչափ ալ գոհութեամբ հաստատենք թէ Վեհ. Մակար կաթողիկոս իւր էական պարտաւորութեանց չէ թերացած և արժանի է ազգային քաջալերութեան՝ անխախտ յարատեւելու համար ազգային ուղղութեան մը մէջ, չենք կրնար աչքերնիս գոցել այն իրաւացի քննադատութեանց որոց դժբախտաբար տեղի կուտան Ն. Վեհափառութեան ինչ ինչ արարք։ Մեր ակնարկած թղթակցութիւն այս նկատմամբ ուշագրաւ կէտ մը կը յիշէր․ Տփղիսի Առաջնորդն է Գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանց, հմուտ, կորովի, պարտաճանաչ և համակրելի եկեղեցական մը, որ սակայն Կաթողիկոսին տհաճութեան ենթակայ է, հաւանօրէն այն պատճառաւ թէ կաթողիկոսական վերջին ընտրութեան մէջ իւր քուէն գլացած էր Մակար Սրբազանի, Խրիմեան Սրբազանին տալով զայն։ Տփղիսի վերջին լրագիրք կը ծանուցանէին թէ Սեդրակեանց Սրբազան հրաժարական տուեր է Վեհ. Կաթողիկոսին, պաշտօն խնդրելով Ռուսահայաստանի ո՛ և է վանքի մը մէջ։ Տփղիս գրեթէ միլիոն ու կէս Հայոց մտաւոր կեդրոնն է, և այնպիսի կեդրոնի մը գլուխն առաջնակարգ եկեղեցական մը ունենալ Էջմիածնայ Գահակալին համար կարեւորագոյն պէտք մ'է։ Զգիտենք թէ Վեհ. Մակար կաթողիկոս ընդունա՞ծ է Սեդրակեան Սրբազանի հրաժարականը. բայց Ն. Վեհափառութիւն, որ քաջ գիտէ թէ առաջնակարգ եկեղեցականներ շատ չունի իւր ուղղակի հրամանաց ներքեւ, անշուշտ կը զգուշանայ վանքի մը չորս պատերուն մէջ փակելէ Ազգին կարողագոյն եկեղեցականաց մին, որ Տփղիսի պէս կարեւորագոյն թեմի մը մէջ հասարակաց համակրանքը գիտցած է գրաւել։ Ո՛չ նուազ ցաւալի է տեսնել թէ Ռուսիոյ Հայոց մէկ ուրիշ կարող եկեղեցականն, Արժ. Տ. Խորէն Վ. Ստեփանէ, հմուտ և ճարտարախօս քարոզիչ, և Նախանձախնդիր պաշտօնեայ Եկեղեցւոյ, շնորհազուրկ կը մնայ անպաշտօն, թէեւ չըսուիր թէ պարսաւելի արարք գործած լինի։ Կը փափաքինք որ Ամենայն Հայոց Հայրապետին արարք և տնօրէնութիւնք ամեն քննադատութենէ գեր ի վեր հանդիսանան, և անձնականութիւնն անգամ անոնց մէջ նիւթ չկարենայ գտնել խմբթանաց։ Եւ կը յուսանք թէ երկրորդական խնդրոց մէջ իսկ Վեհ. Մակար կաթողիկոս անտեղիտ և գովելի պաշտօնավարութեամբ մը իւր հակառակորդները զինաթափ ընելու համար հոգ և խնամք չի խնայեր բնաւ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Փոլիթիշէ Քորէսփոնտէնց կ'իմանայ ի Փեթերսպուրկէ թէ Զարը, կայսերական կառախմբին պատահած արկածին վրայ խօսելով, բացագանչեր է թէ՝ «Այդ աղէտ արդիւնք էր Նենգութեան, գողութեան և պարտազանցութեան»։

— Ֆրանսայի Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնաժողովը ընդունեց Պ. Լակերռէի առաջարկն, որուն համեմատ Սահմանադիր ժողովոյն կատարած վերաքննութիւնը ժողովրդային քուէի (փլէպիսիթ) վաւերացման պիտի ենթարկուի։

—Իտալիոյ պատերազմական Նախարարութեան պաշտօնաթերթն, Էսէրչիթօ, Նոյմ. 8 թուով պատերազմաշունչ յօդուած մը հրատարակեց, որ մեծապէս առարկայ եղաւ ուշադրութեան յԻտալիա և արտաքոյ Իտալիոյ։ Այս յօդուածով յայտարարեց թէ «Ֆրանսայի դէմ պատերազմ մը ճակատագրային հարկ մ'է», և թէ պէտք է լրջօրէն պատրաստուիլ այս ծանր պատահականութեան։ Հռոմայ մէջ իսկ այս յօդուած տխուր տպաւորութիւն մ'ըրեր է, թէեւ կը կարծուի թէ իտալ[illegible]ուորական նոր վարկերը քուէարկել տալու մտօք գրուած է։

—Անգլիոյ Երեսփոխանաց ժողովոյն մէջ առաջարկ մը ներկայացուեցաւ, որով կը խնդրուի ուղերձ մը մատուցանել Թագուհւոյն, աղաչելով որ անգլ. կառավարութիւնը Տէրութիւններն հրաւիրէ դեսպանախորհուրդ մը կազմել, եթէ կարելի է ի Լոնտոն, խորհելու և որոշելու համար թէ ինչպիսի միջոցներով կարելի է միանգամ ընդմիշտ ջնջել գերեաց տուրեւառն Աֆրիկէ։

—Պ. Կլատսթօն, թէեւ գրեթէ 80 ամեայ, անխոնջ է դեռ։ Բաջապէս գնաց մնեցաւ ի Պիրմինկէմ, Միութենական Ազատականաց բանակեղւոյն մէջ, Պ. Չէմպըրլէնի և Լորտ Հարթինկթընի պաշտպաններն իւր կողմը դարձնելու առաջադրութեամբ։ Նոյմ. 7ին երեք բանախօսութիւններ միանգամայն արտասանելէն զատ, Նոյմ. 8ին ալ խօսեցաւ Ազատական Միութեան 3,000 պատուիրակաց առջեւ, յայտարարելով թէ ցորչափ կենաց շունչ մը մնայ իւր մարմնոյն մէջ, Իռլանտայի ինքնօրինութեան համար պիտի մաքառի։

—Անգլիոյ Երեսփոխանաց ժողովոյն Նոյմ. 8ի նստին մէջ, պատերազմական Նախարար Պ. Սթէնհոփ սա տեղեկութիւններն հաղորդեց Սուաքինի կացութեան վրայ.—Տէրվիշք, 1,500 հետեւակ զօրքով, վեց թնդանօթով եւ մաս մը հեծելազօրքով, պաշարեցին զՍուաքին սեպտ. 18ին։ Թշնամին գիշերներն յաջողապէս կրակ բացաւ Սուաքինի բերդերուն վրայ, սեպտ. 26ին և հոկտ. 30ին մանաւանդ։ Կրէնֆէլ զօրավար չորս թնդանօթով ճամբայ ելաւ Սուաքին երթալու համար ուր երկուշաբթի հասած պէտք է լինի։ Եգիպտական կառավարութեան հետ համաձայնութեամբ, որ օգնական զօրք ղրկեց, Զօր. Կրէնֆէլ պիտի կազմակերպէ Սուաքինի պաշտպանութիւնը։

—Միջերկրականի անգլ. Նաւախմբէն [illegible] զրահաւորին հրաման տրուեցաւ Զանզիպար երթալու։

—Պ. Զոլայի և Պ. Փօլ տը Քոքի քանի մը վէպերուն անգլիերէն թարգմանութիւնները վաճառող գրավաճառ մը Լիվրբուլի պատժական ատեանին առջեւ դատի ենթարկեցաւ։

—Կ. Պոլիս, 6 Նոյմ. առ Թայմզ.—Փեթերսպուրկէ առ Բ. Դուռն ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ որ եթէ արքայական ամուսնալուծման պատճառաւ ի Սերպիա յուզում ծագի, և եթէ Աւստրիա գրաւէ զՍերպիա, Ռուսիա, այնպիսի պատահականութեան մը մէջ, ինքզինք ազատ պիտի համարի զօրք ղրկելու մասին ամեն յանձնառութենէ, ի պաշտպանութիւն իւր կենսական շահուց պալքանեան թերակղզւոյն մէջ։—Պերլինէ ևս կը հեռագրուի առ Բ. Դուռն թէ առաջիկայ գարնան Վիլհելմ Կայսր Կ. Պոլիս պիտի այցելէ, Աթէնք ուղեւորելուն առթիւ։

—Վիեննա, 7 Նոյմ.—Յունաստանի Թագաւորն ինքնագիր նամակ մը ղրկեց առ Միլան Թագաւոր, ջերմ շնորհակալութիւն յայտնելով իւր գահակալութեան քսան և հինգերորդ տարեդարձին առթիւ Սերպիոյ Թագաւորին խնդակցութեանց համար, և յոյս յայտնեց թէ «Պալքանեան հինգ Թագաւորութիւնք միշտ միացեալ պիտի մնան բարեկամութեամբ, որ յոյժ կարեւոր է իրենց հասարակային շահուց պատճառաւ»։—Սերպ կառավարութիւնն հիւպատոսութիւն մը հաստատեց ի Վիթոլիա (Մոնասթըր), կեդրոն մակեդոնաբնակ սերպ ժողովրդեան, և Սոֆիայի դիւանագիտական գործակալութեան քարտուղար Պ. Տիմիտրի Պօրի անուանեցաւ սերպ հիւպատոս։ Պուլկարք հաճութեամբ չեն տեսներ սոյն նոր հիւպատոսութեան հաստատումն, որ կը վախնան թէ սերպական փրօփականտայի մը կեդրոն կը դառնայ։—Միլան Թագաւոր այսօր յայտարարեց Սերպիոյ երից քաղաքական կուսակցութեանց պետերուն թէ յօժարամիտ է թողուլ մաս մը այն արքայական առանձնաշնորհումներէն զորս իրեն տուած է 1869ի Սահմանադրութիւնն։ Այս յայտարարութիւն շատ ուրախութեամբ ընդունուեր է։

ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆԱՑ ՄԵԾ ԹԱՓՈՐՆ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

ՆԻՒ ԵՈՐՔ, 28 Հոկտ.

Նախագահական ընտրութեան օրն որչափ աւելի կը մօտենայ նոյնչափ աւելի յեռանդ և ի գործ կը շարժին ազատ քաղաքացիներն այս երկրին, որ գրեթէ հաւասարապէս բաժնուած են երկու հակառակորդ բանակներու։ Կագ ու կռուի հե- [illegible] դարար այս կռւոյն մէջ գործածուած զէնքերն չեն կոտորած, աւեր եւ ապականութիւն սփռող զէնքեր։ Գրիչ, լեզու և դրամ, ահա ասոնք են գլխաւոր զէնքերն որովք կը մարտնչին իրարու հետ քաղաքացեաց երկու բանակներն իրենց երկրին բախտը տնօրինելու յառաջիկայ չորս տարւոյ համար։ Արդէն աւելի քան ամիս մ'է որ գրեթէ ամեն գիշեր Նիւ Եորքի այլ և այլ կողմերը մեծ և փոքր թափորներ կ'ըլլան։ փողոցներն որ կողմ դառնաս, կը տեսնես գունդ գունդ մարդիկ որ ի ձայն նուագաց և ջահերով ու դրօշներով մէկ փողոցէն կ'ելնէին միւսը կը մտնէին։ Խուռն բազմութեամբ կը լեցուին մեծ սրահներ ուր կ'ատենախօսեն պերճախօս մարդիկ, և հրապարակներու մէջ կ'ըլլան հրախաղութիւններ։

Նիւ Եորք քաղաքի Ռամկավարականաց մեծ թափորն օր որոշուած էր երէկ, հոկտ. 27 շաբաթ օր, եւ Նախագահ Քլիվլընտ Ուաշինկթընէն Նիւ Եորք եկած էր մեծ թափորը տեսնելու, և իւր ներկայութեամբ աւելի փառաւորելու Ռամկավարականաց եռանդը։ Թափորին համար մեծ պատրաստութիւններ տեսնուած էին, և կ'ըսուէր թէ աւելի քան յիսուն հազար հոգիք պիտի մասնակցէին թափորին։ Դժբաղդաբար շաբաթ լուսնալու գիշեր սկըսաւ անձրեւ որ անընդհատ տեւեց բոլոր օրը։ Երկինք թուխ ամպերով ծածկուած էին, եւ օդն ամեն կողմանէ հակառակ էր թափորին։ Փողոցները չէին կրնար ըլլալ աւելի ցեխոտ, և մեծ քաջութիւն ու եռանդ պէտք էին համոզել զմարդիկ իրենց տուներէն կամ գործի տեղերէն դուրս ելնել։ Սակայն Ռամկավարականք լիուլի ապացուցին թէ ոչ տարերք և ոչ այլ ինչ կրնան խափանել յաջողութիւնն։ Արդարեւ կայ ներշնչող բան մ'այն հայրենասիրութեան մէջ որ կը դրդէ աւելի քան երեսուն հազար մարդիկ Ամերիկայի մեծագոյն քաղաքին, երեսուն հազար բանի գործի մարդիկ, թողուլ իրենց խանութներն, իրենց գրասենեակներն և դրամատեղաններն և ցեխի մէջ ու տեղատարափ անձրեւի ներքեւ ժամերով փողոցները մնալ և կամ թափոր կազմելով քաղքին մէկ ծայրէն միւսը քալել։ Եթէ օրն ըլլար պայծառ օր, թափորին մէջ հարիւր հազար մարդոց գտնուիլն այնչափ մեծ նշանակութիւն չէր ունենար որչափ ունի երէկի թափորն։ Այս թափորին մասնակցող երեսուն հազար անձանց մէջ կային հարիւրաւոր մարդիկ որ հարիւր լիրա շահելու համար չէին ենթարկեր իրենց անձերն կլոյն այն նեղութեանց և տառապանաց որոց ենթարկուեցան երէկ։ Թափորին մէջ կային գողգոջուն և ալեւոր ծերունիներ որոց համար կենաց վըտանգ էր այսպիսի օդի մը տունէն դուրս ելնել, թող թէ ժամերով անձրեւի ներքեւ քալել։ Պատկառելի վաճառականներ որոց անուանք յովկիանէ յովկիան ճանչցուած են, իրենց գրագիրներուն եւ սպասաւորներուն հետ մէկ կարգ մտած կ'արհամարհէին հողմ ու անձրեւ ցուցնելու թէ ինչպէս չորս տարի առաջ նոյնպէս և այժմ Նիւ Եորք քաղաքին սիրտը Նախագահ Քլիվլընտի հետ էր։ Ընդ երկայնութիւն բոլոր ճամբուն ընդ որ կ'անցնէր թափորը, շէնքերն համայն ծածկուած էին հազարաւոր դրօշներով և խորհրդաւոր նշաններով։ Հասա հանդիսատես բազմութիւնն ո՞վ կրնայ թուել։ Արք, կանայք և տղայք, հարուստ և աղքատ, ժամերով համբերութեամբ մնացին յոտից ցգլուխ թրջուած։ Բոլոր փողոցներէն մարդկային հեղեղներ կը հոսէին, և ընդարձակ պողոտային երկու կողմն քանի մը մղոն երկայնութեամբ երեք ասեղ ձգելու տեղ մնացած չէր։ Նախագահին և ուրիշ հրաւիրելոց համար յատուկ տեղ պատրաստուած էր Մատիսըն Սքուէյր կոչուած հրապարակին վրայ Ֆիֆթհ Ավընիւ Հօթէլի դէմ։ Ժամն երկուքը քիչ մ'անցած էր երբ Նախագահ Քլիվլընտ առաջնորդութեամբ խումբ մը հեծեալ ոստիկանաց կառքով եկաւ։ Նախագահին գալուստն յուզեց անհուն բազմութիւնն որպէս փոթորիկ ըզծով։ Արք հուրրայի ձայներով այնչափ թնդացուցին օդն, որ կարծես թէ ամպերը պիտի ճեղքէին։ Կանայք ոչ միայն կը ծածանէին դրօշակներ և թաշկինակներ, այլ և կը խառնէին իրենց ձայներն արանց ձայներուն։ Դիմացի մեծ պանդոկին պատուհաններէն միոյն առջեւ կեցած էր անթագ դշխոյն այս երկրին, գեղանին Տիկին Քլիվլընտ որ իրաւունք ունէր նոյն պահուն կոչել զինք երջանկագոյն կինն այս ընդարձակ երկրին մէջ։ Նախագահն իրեն համար պատրաստուած ամպհովանւոյն տակ այն ինչ նստած էր, աչքն յառեց դիմացի պանդոկն, և հոն նշմարելով զՏիկին Քլիվլընտ գլուխը բացաւ եւ ժպտուն դիմօք ողջունեց զնա։ Ժամն երեքին քառորդ կար, և ահա թափորին գլուխն սկսաւ երեւիլ։ և կը լսուէր պատերազմական եղանակ նուագաց։ Առաջին խումբի մարդիկ երբ կ'անցնէին Նախագահին առջեւէն, յետ յարգանօք ողջունելոյ զնա բարձրաձայն կը գոչէին. «Ֆօր», [illegible]» Այս միջոցին անձ մը [illegible] գահին։ Մ'ինչ փոյթ բերող անձը կը մեկնէր, ամբոխին մէջ նշմարուեցաւ կանաչներ հագած ծերունի կին մը, որ կը ճըգնէր յառաջ անցնիլ դէպ ի Նախագահին ամպհովանին։ Հասկցուեցաւ թէ Մր. Բարնըլլի մայրն էր այն, և շուտ բերուեցաւ Նախագահին մօտ, ուր մնաց մինչև թափորին վերջը։ Այլեւայլ խումբերն որ իրարու կը յաջորդէին, կարծես իրենց մըտերիմ մէկ բարեկամը կ'ողջունէին զնախագահն, մկրտութեան անուամբը կոչելով զնա Կրօվըր։ Խումբերէն մէկ քանի մարդիկ կը հարցնէին. «Ի՞նչպէս է Կրօվըր։» Եւ հարիւրաւորք միաբերան կը պատասխանէին. «Կրօվըր շատ աղէկ է. դարձեալ պիտի բազմի Նախագահական աթոռը։» Այս պատասխանն արձագանգ կը գտնէր մեծ բազմութենէն։ Թափորին մարդերէն շատեր իրենց գլխարկներն անձրեւէ պահպանելու համար ծածկած էին զանոնք թաշկինակներով, որ կը կրէին Քլիվլընտի և փոխ նախագահութեան ընտրելի Մր. Թըրմընի պատկերները։ Ուրիշ խումբեր Նախագահին այլեւայլ առիթներու մէջ արտասանած իմաստալից խօսքերն շըրջանակի մէջ առած իբրեւ նշանաբան ներկայ եւ յաջորդ կառավարութեան կը պարզէին քաղաքացւոց առջեւ։ Խումբ մը դրօշակներն, որու նշանակութիւնն էր նախագահին սա խօսքը թէ «չափազանց տուրք է անարդար տուրք,» ցուցնելով այս խօսքը Մր. Քլիվլընտի հարցուց. «Ի՞նչպէս է այս, Կրօվըր։ Շիտա՞կ է։» Խումբ մը մարդիկ որ կը կրէին չորս տարի առաջուան ընտրութեան ատեն Քլիվլընտի ու Հէնտրիքսի դրօշ մը, անոր վրայ գրած էին այսպէս. «Չորս տարի յառաջ 1884ին այս դրօշը տարինք ի յաղթութիւն, պիտի տանի՞նք զայն ի յաղթութիւն նաեւ 1888ին։» Ուրիշներ իրենց դրօշներուն վրայ գրած էին. «Հասարակաց պաշտօնն է հասարակաց աւանդ։» «Տուէք մեզ անմաքս բուրդ, և մեք զաշխարհ կը հագուեցունենք։» «Միթէ բերէք թէ, սպառողք են որ կը հատուցանեն տուրքերը։»

Իբր երկու ժամ չորանալ հեղեղի պէս անդադար հոսեց բազմութիւն ամեն կարգի մարդոց և բոլոր այս միջոցին Նախագահը կեցաւ իւր տեղն փոխարինելու սէրն, համակրութիւնն և ողջոյնն զորս կ'ընդունէր իւր հայրենակիցներէն։ Շատեր որ առաջին անգամ կը տեսնէին ըզնախագահն, ի լուր բազմաց կ'ըսէին թէ Քլիվլընտի դէմքն և շարժուածքն համակրութիւն կը ներշնչէին։

Նիւ Եորք Հէրըլտ խօսելով երէկի թափորին վրայ կ'ըսէ թէ ամեն պարագայ ի նկատի առնլով կը յայտարարենք թէ այս թափորն որ հակառակ ձախող օդի այսչափ յաջող եղաւ, է այս պայքարին եւ որեւիցէ ընտրական պայքարի ամենէն ազդեցիկ տեսարանն, և է հաւաստի նշան յաղթութեան ուղիղ և պարկեշտ կառավարութեան։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Բ. Դռնէն Պատրիարքարանի հաղորդուեցաւ Վեհ. Սուլթանի մէկ Իրատէն որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհելի ունկնդրութիւնն, օդին աստակութեան պատճառաւ, կը յետաձգէ յառաջիկայ երկուշաբթի օրուան ի ժամ 9։

Ըստ այսմ հրաւէր ուղղուեցաւ ամեն անոնց, որք Ամեն. Ս. Պատրիարք Հօր պիտի ընկերանան, նոյն օրը ժամ 7ին ներկայ գտնուիլ ի Պատրիարքարան։

Աղեքսանդրիայէ կը գրեն մեզ թէ Դաշհրէէն պատուիրակութիւն մը դիմելով յԱղեքսանդրիա, ուր կը գտնուի տակաւին Գեր. Առաջնորդն Իզմիրլեան Սրբազան, խնդրեր է Ն. Գերապատւութենէն ետ առնուլ իւր հրաժարականն, և յաջողեր է այդ։— Նոյն նամակաւ կը հաղորդեն մեզ թէ, Աղեքսանդրիոյ Թաղական Խորհրդոյ կազմակերպութենէն անմիջապէս վերջ, պիտի ձեռնարկուի աղջկանց վարժարանի և առաջնորդարանի շինութեան։

Տրապիզոնի Քաղաքական և Կրօնական Ժողովներն ուղերձ մը ղրկելով առ Ս. Պատրիարք Հայրն, շնորհաւորած են իւր պաշտօնը։

Արժ. Տ. Սահակ Վրդ. Նազարէթեան Ռոտափաղարի ազգային ընդհանուր վարժարանաց տեսուչ կարգուեր է։

Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւնն հեռագրաւ շնորհաւորած լինելով ի Նիկոմիդիա Ամեն. Տ. Խորէն Սրբազանի պատրիարքական ընտրութիւնը, Ն. Ամենապատուութիւնն օրհնութեան գիր մ'ուղղած է Դպրոց. Տիկնանց ընկերութեան։

Խորին ցաւօք կը ծանուցանենք թէ դառն և անակնկալ աղէտ մը խոր սգով պատեց Գազազեան գերդաստանն և անոր բոլոր բարեկամներն. Մեծ. Կարապետ էֆէնտի Գազազեան, եղբայր Վսեմ. Ցակոբ փաշայի, այսաւուր կնքեց իւր մահկանացուն. Հանգուցեալն ազնիւ ձիրքերով օժտեալ, գործունեայ և աշխատասէր անձ մ'էր և բոլոր զինքը ճանչցողներուն համակրանքը գրաւած՝ իւր հեզահամբոյր [illegible]ութեամբ։

Այս դառն կորստեան համար մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք հանգուցելոյն սգակիր մօր և եղբարց՝ Վսեմ. Ցակոբ փաշային և Մեծ. Նշան էֆէնտիին ու քրոջ՝ Տիկին Ազատի Տէրունեանին, և երկնից մխիթարութիւն կը հայցեմք։

ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻ ԳԱԶԱԶԵԱՆ

ԵՂԲԱՅՐՆ ՎՍԵՄ. ՅԱԿՈԲ ՓԱՇԱՅԻ

Յետ սակաւօրեայ հիւանդութեան հանգեաւ ի Քրիստոս, ի խոր սուգ և ի կսկիծ համակելով իւր մայրն և եղբարքն ու քոյրը և բոլոր ազգականք ու բարեկամները։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը՝ հինգշաբթի՝ ի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Բերայի, ուր առաւօտեան ժամը 4ին Ս. Պատարագ պիտի մատուցանէ Գեր. Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց և զկնի՝ հանգուցելոյն մարմինը պիտի փոխադրուի յԱզգային գերեզմանատունն Շիշլի ի Դամբարան իւր նախնեաց։

Բերա 2|14 Նոյեմբեր

Ինչպէս կ'երեւի այս աւուր պաշտօնաբաշխութեանց ցուցակէն, գոհունակութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել Երուսաղեմայ Ս. Ցակոբայ վանուց վարչական ժողովոյ ատենապետ Գեր. Աստուածատուր եպիսկոպոսի, լուսարարապետ Գեր. Սահակ եպիսկոպոսի եւ վանուց կրօնական վարժարանին տնօրէն Գեր. Մամբրէ եպիսկոպոսի, եւ Չորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան Երուսաղեմատան քարտուղար Անոյշեան Արժ. Գաբրիէլ վարդապետի։

Պ. Պ. ԱԴԱՄԵԱՆ

Դերասանապետ Պ. Մաղաքեան, նկատելով որ օդերուն գէշութեան պատճառաւ Պ. Ադամեան հարկադրեալ է քիչ մը ատեն ևս մայրաքաղաքս մնալ և օգուտ քաղելով Ֆրանսական խմբին բացակայութենէն որ պարապ կը թողու Նոր Թատրոնը, յառաջիկայ կիւրակէ օրուան համար կազմակերպած է նոր ներկայացում մը, յորում գլխաւոր դերը պիտի կատարէ դարձեալ մեծանուն արուեստագէտն զոր մեր մէջ ունենալու բաղդը կը վայելենք. Ներկայացուելիք խաղն է Ալեքսանդր Տիւմայի հռչակաւոր թատերախաղը Քին, յորում Պ. Ադամեան թատերաբեմին վրայ թատերախաղ կը ներկայացնէ իբր դերասան, ներկայացնելով շէյքսբիրեան Լիրի կամ Լիրի խորախորհուրդ տեսարանը։

Ցառաջիկայ շաբթու ևս մինչև կիրակի Պ. Ադամեան երկու ներկայացում պիտի տայ Ֆրանսական Նոր Թատրոնին մէջ։

Ծանուցուեցաւ թէ Եգիպտոսի մէջ պիտի սկսի հրատարակուիլ Նեղոս անուամբ ազգային շաբաթաթերթ մը, որոյ արտօնութիւնն ստացած է Եգիպտական կառավարութենէն Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Փափազեան. Արդ, կ'իմանանք թէ Նեղոսի արտօնութիւնն ստացած է ո՛չ թէ Արժ. Հայրն, այլ Վահան էֆէնտի Մամասեան։

ՀԱՇԻՒ

Նէնի-Մահալլէի Թաղ. վարժարանին ի նպաստ Պէյլէրպէյի Թատրոնին մէջ տրուած Թատերական ներկայացման 17/19 Սեպտեմբերի 1888

	Օսմ. ոսկի
Թատրոնի վարձք	3
Դերասանաց	27
Տպագրութեան, ստմիկանաց, կաշի և այլ մանր ծախուց	9 ·73 62 ½
	39 ·73 62 ½
Ապառիկ	6 ·50
Զուտ հասոյթ	67 ·70
	113 ·93 62½

Ի դիմաց Կարգադիր Մասնախմբի

Գանձապետ — Ատենապետ

Ց. ՍՎԱՃԵԱՆ — Կ. ԵԴՆԱՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Լոնտոնի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար անուանուեցաւ Ապտիւլհագ Համիտ պէյ որ նախապէս կը վարէր այդ պաշտօնը։

Տրապիզոնի Ջարշանպա գաւառակին գայմագամ անուանուեցաւ Ագչէապատի գայմագամ Մէհմէտ Ալի էֆէնտի և նմա յաջորդեց Լէճէ նախորդ գայմագամ Բէհճատ էֆէնտի։

Սանիյէի երկրորդ աստիճան տրուեցաւ մաքսային վերատեսչութեան դիւանին տնօրէն Ահմէտ Համտի էֆէնտիի և կրթական նախարարութեան հաշուակալութեան քարտուղար Վիչէն էֆէնտիի։

Սալիսէի աստիճան՝ նոյն նախարարութեան հաշուակալութեան դիւանի քարտուղարներէն Իպրահիմ պէյի, Սալիհ էֆէնտիի, ախզակալ Վէլի էֆէնտիի, Տէպրէ գաւառին թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Նէճմէտտին էֆէնտիի, Ռուսճուքի իսլամ հասարակութեան երեւելիներէն Նուրի էֆէնտիի և Պուրքէշի հայ հասարակութեան երեւելիներէն Աղեքսանդր Սիմէօնօֆ էֆէնտիի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Երուսաղէմայ Ս. Ցակոբայ վանուց վարչական ժողովոյ ատենապետ Գեր. Աստուածատուր եպիսկոպոսի, լուսարարապետ Գեր. Սահակ եպիսկոպոսի, և նոյն վանուց կրօնական վարժարանին տնօրէն Գեր. Մամբրէ եպիսկոպոսի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Երուսաղէմատան քարտուղար Արժ. Գաբրիէլ վարդապետ Անոյշեանի։

Հինգերորդ կարգի Մէճիտիյէ՝ Բոնիայի թղթատարական բժիշկ Եանաքի էֆէնտիի։

ՖԵՐՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆԻՆ ԵՂԲԱՅՐԸ

Վիէննայէ կը գրեն թէ Պուլկարիոյ Ֆերտինանտ իշխանին եղբայրը՝ Սաքս-Գոպուրկի իշխանն այդ մայրաքաղաքէն մեկներ է Նոյեմբեր 9 ին (Ն. Տ.), Վառնայի ճանբով Կ. Պոլիս բերելու համար. Իշխանն ասկից Սոֆիա պիտի երթայ ի տեսութիւն իւր եղբօր։

ՕՏԱՐ ՆԱՄԱԿԱՏՈՒՆՔ

Այսօր Խարիճիյէի պաշտօնատան մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարուելով պիտի խորհրդակցի այն արտօնութեան վրայ զոր աւստրիական կառավարութիւնը խնդրած է երկարելու համար թղթատարական առժամեայ պայմանագիրը։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Վեհ. Սուլթանի թիկնապահներէն Պէխիմ պէյ երեկ Բ. Դուռը գնաց եւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հաղորդեց Ն. Վեհափառութեան ինչ ինչ հրամանները։

—Մաքսային վերատեսուչ Նաիպ էֆէնտի և Հասան Ֆէհմի փաշա երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Բարձր. Մեծ Եպարքոսին հետ։

—Ռուսական դեսպանատան առաջին թարգման Պ. Իվանով և պարսկական դեսպանատան առաջին թարգման Արմաքի խան Նէվրուզ երէկ Բ. Դուռը գնացին և յաջորդաբար տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. Խորհրդականին հետ։

—Պուլկարական գործակատարն երէկ Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

ԵԼՄՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ելմտական յանձնաժողովն երէկ ևս ի նիստ գումարեցաւ ընդ նախագահութեամբ Ելմտական առժամեայ նախարար Վսեմ. Ցակոբ փաշայի և նկատողութեան առաւ հասոյթից և ծախուց յատուկ տոմարներն ու գրութիւններն։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Կայս. կառավարութեան և գերմանական կառավարութեան միջեւ կնքեալ առեւտրական նոր դաշնագիրը վաւերացնող կայս. Իրատէն երէկ Բ. Դրան հաղորդուեցաւ։

ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՄԸ

Մկրտիչ էֆէնտի Կ. Գալֆաեան, ոսկերիչ ի Պէզէսթէն, վերջերս կերտած էր արծաթեայ ծխատուփ մը որոյ վրայ նկարած է Կ. Պոլսոյ տեսարանը Պէշիքթաշէն առնուած. Սոյն տեսարանին ճակատը փորագրուած է կայսերական զինանշանն ոսկիէ, և տուփին չորս անկիւնները կը ներկայացնեն Կ. Պոլսոյ զանազան նկարներ, ինչպէս Սուլթան Պէյազիտի աղբիւրը, Պէյլէրպէյի ապարանքն և Պէշիկթաշի կայսերական պալատան դուռը։

Սոյն տուփը մատուցուած է Վեհ. կայսեր՝ ձեռամբ կայսերական պալատան առաջին քարտուղար Սիւրէյյա փաշայի. Ն. Կ. Վեհափառութիւնը, կարի գոհ մնալով տաղանդաւոր արուեստագիտին այս գեղակերտ աշխատութենէն, շնորհած է նմա չորրորդ կարգի Մէճիտիյէ և Արուեստից շքադրամ, և միանգամայն յանձնարարած է յօրինել ոսկեայ ուրիշ տուփ մը։

Գալֆաեան էֆէնտի ասկից առաջ յօրինած է 12 տարին մէկ անգամ լարուող ժամացոյց մը, ինչպէս նաև ոսկեայ ճարտարարուեստ ծխատուփ մը որ 1878ի Բարիզի ցուցահանդէսին մէջ ի տես դրուած և մեծապէս գնահատուած է։

ՊԵՐՈՒԹԻ ՔԱՐԱՓԸ

Եուսուֆ Մութրան էֆէնտի որ ի Պէրութ քարափ մը և նաւահանգիստ մը շինելու համար մենաշնորհ ստացած էր կայս. կառավարութենէն, անանուն ընկերութիւն մը կազմած է այդ մենաշնորհի տրամադրութեանց համաձայն. Ընկերութեան ներքին կանոնագիրն ստորագրած և փոխանակած են կայս. կառավարութեան կողմէ՝ Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց նախարարն և Հանրային Պարտուց Վարչութեան ընդհանուր տնօրէն Սէլիմ Մէլհամէ էֆէնտի, իբր ներկայացուցիչ մենաշնորհի տիրոջ եւ դրամատեարց. Այս ստորագրութիւնք վաւերացած են Դատական նախարարութեան նոտարաց միջոցաւ։

ՀԵԼԼԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Հելլենական արտասովոր պատուիրակութեան անդամք ընկերակցութեամբ թիկնապահ Շէֆիգ պէյի, երէկ Պոլսոյ կողմն անցան պալատական կառքերով եւ այցելեցին բոլոր նշանաւոր վայրերն։

Պատուիրակութիւնն երէկ գիշեր ներկայ գտնուեցաւ ճոխ հացկերոյթի մը զոր արարողապետ Մինիր փաշա տուաւ իւր ծովեզերեայ ապարանքին մէջ ի Ենիգիւղ. Ներկայ էին օսմանեան եւ օտարազգի բարձրաստիճան պաշտօնատարք։

Կըսուի թէ պատուիրակութիւնը յառաջիկայ ուրբաթ օր Աթէնք պիտի ուղեւորի։

ՎԱՌՆԱՅԻ ՇՈԳԵՆԱՒԸ

Վառնայի թղթատար շոգենաւն որ երկուշաբթի օր մայրաքաղաքս պիտի հասնէր և որուն մինչեւ այս առաւօտ ուր լինելու մասին տեղեկութիւն առնուած չէր, այսօր մայրաքաղաքս ժամանեց։

ԱՐԳԻԼԵԱԼ ԼՐԱԳԻՐՔ

Ի Հռոմ հրատարակեալ Ժուռնալ տը Ռօմ լրագրոյ ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱԽՈՒՄԲ

Կիրակի և երկուշաբթի ծագած բուռն փոթորկին պատճառաւ, Վիէննայէն Կ. Պոլիս եկող կառախումբը ձեան կոյտերու մէջ բռնուեր է Չերքէզքէօյի և Չօրլուի միջեւ. Չերքէզքէօյէն անմիջապէս օգնութեան ղրկուած կառախումբ մը տարեր է ուղեւորներն և թղթատարական պայուսակներն և Կ. Պոլիս փոխադրեր է զայնս։

Հակառակ ընկերութեան կողմէ ձեռք առնուած միջոցներուն, կառաշարժ կանոնաւոր երթեւեկութիւնն ապահովելու համար, այս վերջինք բաւական յապաղումներ կրած են և հետեւաբար եւրոպական սուրհանդակք ուշ հասան։

Կիրակէ օրը Սիրքէճիէն ի Բարիզ և Վիէննա մեկնող արեւելեան ճէպընթաց կառախումբն և միւս 2 կառախումբը կրցած են իրենց ճամբան շարունակել, ո՛չ առանց դժուարութեան։

ՆԱՒԱՑԻՆ ԱՐԿԱԾՔ

Նոքիլ շոգենաւն, որ նախընթաց օր ի Սեւ ծով ուղեւորած և արդէն 150 մղոն ճամբայ առած էր, ստիպուեցաւ ետ դառնալ վասն զի մեքենային մէջ խանգարում մը պատահած էր։

—[illegible] շոգենաւն, որ կիւրակէ օր Պոլսոյ նաւահանգստէն մեկնած էր, օդին սաստկութենէն ստիպուեցաւ ետ դառնալ ինչ ինչ վնասներ կրելով։

—Օտեսայի գծին վրայ գտնուող շոգենաւներու վրայ տեղեկութիւն առնուած չէ. Այս կողմէն է նաեւ շոգենաւն որ Նոյեմբեր 5ին (Ն. Տ.) Պոլսոյ նաւահանգստէն Օտեսա ուղեւորած էր. Կ'ըսուի թէ ծովեզերք մը ապաստանած է։

—Նախընթաց օր զուգամթի նաւակ մը, որ Թոփխանէէ առած երեք ճանապարհորդները Պէշիկթաշ կը փոխադրէր, Ֆընտըքլըի առջեւ ընկղմեցաւ օդին սաստկութենէն. Չորս կողմէն օգնութեան փութալով ազատեցին թէ նաւավարներն և թէ ճանապարհորդները։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Հետեւեալը կը կարդանք այս աւուր Սաատէթի մէջ.

Անցեալ ամսոյ 24-դ օրն ի Պրուսա Սէտպաշը թաղը Ցակոբոս անուն մետաքսի գործարանատէր մը անձնասպան եղած է ինքզինքը թունաւորելով. Ոստիկանութիւնն անմիջապէս քննութիւններ կատարելով հաստատած է թէ Ցակոբոս օր մը առաջ արջասպ խմած և այդ թոյնի ազդեցութեամբ մեռած էր. Գալով անձնասպանութեան շարժառիթին հաստատուած է թէ Ցակոբոս սիրահարուած է եղեր իւր գործարանին մէջ աշխատող Եղսոյ անուն սպանտորդացի աղջկան մը թէ իւր ազգականք արգելք կը լինին եղեր այդ աղջկան հետ ամուսնանալուն, որով աղջիկն Ցակոբոսին դէմ դատ բանալու եղեր է։

Կը յիշուի թէ Վեհ. Սուլթանի հրամանաւ բժիշկներ և այլք ղրկուած էին ի Շիլէ անդ գտնուած գաղթականաց միջեւ ծագած հիւանդութիւնը դարմանելու համար և թէ Ն. Վեհափառութիւնն 100 ոսկի շնորհած էր։ Արդ, Քաղաքապետութեան մէկ պաշտօնական ազդը կը ծանուցանէ թէ այդ հիւանդութիւն բոլորովին անհետացեր, հիւանդներն ապաքիներ և ղրկուած բժիշկներն և այլք ճամբայ ելեր են Կ. Պոլիս գալու համար։

—Սեբաստիոյ կուսակալութենէն Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան ուղղեալ հեռագրոյ մը համաձայն Կիրասոնի մեծ խճուղւոյ շինութիւնն աւարտեր է. Նոյնպէս նորոգուեր է Զարա գիւղաքաղաքէն ի Գարահիսար տանող խճուղին։

—Երէկ, ի Ղալաթիա, Կլավանի խանին առջեւ, Թուրք զինուորական մը յանկարծամահ եղաւ։

—Այս առաւօտ Սկիւտարէն կամուրջ եկող շոգենաւէն, յոյն դպրոցական մը ծովն ինկաւ, սակայն անմիջական օգնութեանց շնորհիւ կրցան ազատել զինքը։

—Երէկ մայրաքաղաքս ժամանեցին Գերմանիոյ թանգարանի պաշտօնեայներէն Պ. Պաուլօ Զմիւոնիւէն և Կրէտէի նախորդ տէֆթէրտար Իպրահիմ պէյ Կրէտէէն։

— Հեռագրական և Թղթատարական վարչութիւնն որոշեր է հեռագրական կայարան մը հաստատել ի Մաքրիգիւղ։

—Վճռաբեկ ատենի անդամներէն Էմրուլլահ էֆէնտի որ, Մաղնիսա ղրկուած էր Գալէէրէ ագարակին ծանուցեալ խնդիրը քննելու համար, ձեռնարկեր է իւր պաշտօնին և սկսեր է հարցաքննել այդ խնդրոյն մէջ մասնակցութիւն ունեցողներն։

—Երէկ գիշեր Ելմտական պաշտօնատան ծխնելոյզներէն մին բռնկեցաւ. սակայն սենեկապանք ժամանակին իմանալով վտանգին առաջքն առին։

ԴԵՂԱՐԱՆ Վ. ՍԻՆԱՊԵԱՆ

ԻԹԻ—ԳԱՓՈՒԼՈՒ

Կ. Պոլիս Պահճէ-գափու Թիւ 32

Սոյն առաջնակարգ դեղարանին մէջ, որ հաստատեալ է 135 տարիներէ ի վեր ի Կ. Պոլիս, այս անգամ ևս բերուած են յատկապէս Եւրոպայէն ամեն տեսակ ամենաթարմ և նոր դեղեր, որք կը պատրաստուին ամենայն ուշադրութեամբ և չափաւոր գներով. Անդ կը գտնուին նաև զանազան մասնագեղեր (spécialités), հանքային ջուրեր, Նորվեկիոյ ձկան իւղեր, ևն։

Դեղարանս կը յաճախեն հետեւեալ մեծարգոյ բժիշկներն, Տր. Կ. Նազարէթեան էֆէնտի, ամեն երեքշ. հինգշ. և շաբաթ ժամը 7—9 որ կը դարմանէ ամեն տեսակ հիւանդութիւններ, մասնաւորապէս ևս կը կատարէ վիրաբուժական գործողութիւնք. Տր. Օննիկ Գափամաճեան էֆ., մասնագէտ կանանց հիւանդութեանց, որ կը գտնուի ամեն բշ. դշ. և շբ. ժամը 8—10. Տր. Պ. Առաքելեան, մասնագէտ կոկորդի և ականջի հիւանդութեանց և կը գտնուի ամեն բշ. դշ. և ուրբ. ժամը 8-10։

Աղքատաց համար խորհրդակցութիւնք ձրի են։ Տնօրէն և պատասխանատու

2231 ԳՐԻԳՈՐ Կ. ԹՕՓՈՒԶԵԱՆ

ՄԷՋԱՐՏԱ ՊԻՐ ԻԶՏԻՎԱՃ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

Գրեց՝ ՔԱԶՈՒՆԻ

Նիւլէկեցւոց կեանքէն առնուած սոյն հայատառ և թրքաբարբառ թատերգութիւնն որ անհամեմատ ամուսնութիւններէ դոյանալիք չարիքները կենդանի օրինակաւ մը կը պարզէ, կրնայ օգտակար ըլլալ թէ ծնողաց և թէ ամուսնանալու դիտաւորութիւն ունեցող անձանց։ 2228 1—3

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Բարիզ, 12 Նոյեմբեր

500 միլիոնի ռուսական փոխառութիւնը, միացնելու համար 1887ի Մէնտէլսոնի փոխառութիւնը, կնքուեցաւ Բարիզի և Լոնտոնի դրամատանց հետ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս, 2 Նոյեմբեր

Կանխիկ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

ամիս Լոնտոնի վրայ			(պահ. քայլի)	109 7/8
3	»	»	(վճռ. կնին)	109 ½
3	» Բարիզի	»	(պահ. քայլի)	23 05
3	»	»	(վճռ. կնին)	23 12 ½

Օսմանեան Թօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Օ.	Սէրի		16 36
Գորսային գոցումէն վերջը	»		16 33
Առաւօտուն բացուեցաւ	»	Գ. Կ.	16 27
Կէս օրին	»	»	16 30

[illegible]

Երէկ երեկոյ		38 33
Այս առաւօտ	Գ. Կ.	38 28
Կէս օր	»	38 30

ԸՆԹԱՑՔ [illegible]

Փոխառութիւն	A	Սէրի	Գ. Կ.	27 30
»	B	»	»	16 10
»	C.	»	»	16 30

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգ. Լր.		4 23
Քրէտի Ժէնէրալ	Օսմ.	»	8 16
Պանք տը Գ. Օմ.	»	»	7 10
Փօս. Շմին է վայէօք	»	»	4 34
Թրամվէյ	»	»	457 ½
Բուլմէյի երկաթուղի	Ֆր.		48 50
Բանմէնք ուղիղ Լ.		»	117

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	Գրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 34
Անգլիական ոսկի	»	110 30
Բօյ Իմփէրիալ	»	91 20
Գրիվնց	»	51 20
Ռուսական թղթադրամ	»	8 83
» արծաթ	»	77
Մեճ. արծ. (տարբ.)	»	108 30
Վենետիկ	»	103 20
Հինգնոց	»	103 20
Մէճիտիյէ	»	103 10
Բեշլիք	»	10 20

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 13 Նոյեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. Քոնսօլիտէ	97 5/16
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	15 3/8
» » » գոցուեցաւ	15 ¼
» » » Ա.	27 ¾
» » » Բ.	16 1/8
» » » Դ.	—
Օթօման 1871	21 ½
Փոխառութիւն 1877	93 ½
Պանք Օթօման	11
Ռուսական փոխառ. 1873	100 7/8
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	80 5/8
» առանձն. (Բրիվիլէժիէ)	100 ½
Տայրա Սանիէ	76 ¾
Տօմէնիալ (փոխառ. Բօլիճա)	102 ½
Հունգարական պարտամուրհակ 4 %	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 60

Վիէննա, 13 Նոյեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	122 55
Օսմանեան երկաթուղի	23 30

Բարիզ, 13 Նոյեմբեր ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 ½ %	104 65
» » 3 %	82 97 ½
Օսմանեան քոնսօլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	15 60
» » » գոցուեցաւ	15 40
» » » Բ.	16 60
» » » Գ.	15 35
Օսմանեան երկաթուղի	48 75
» Ըէմիի բաժնեթուղթք	—
Պանք Օթօման	530
Կրէտի Լիոնէ	610
» Ֆօնսիէ	1367 50
Բանք Նասիոնալ	— —
Սուէզի ջրանցք	2230
Ռուսական 5 % 1877 ի	103 ¾
Իտալական Ռանթ	96 72 ½
Սպանիական (արտաքին)	73 3/16
Եգիպտական միացեալ Գ. Ք.	410
Բրիօրիթէ թիւրք	418 75
Հելլենական 5 %	422 50
Չէք Լոնտոնի վրայ	25 30

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 13 Նոյ. ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 ½ %	82 95
Օսմանեան քոնսօլիտէ	15 47 ½
Եգիպտական	410

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Նէնի-Գարու Եալը փողոց Թիւ 63 ծովեզերեայ տունն որ վեց սենեակ, ընդարձակ խոհանոց, ջրհոր և գեղեցիկ պարտէզ մ'ունի, վարձու պիտի տրուի գոհացուցիչ գնով։

Փափաքողներն ամեն օր կրնան դիմել նոյն տունը կամ լրագրոյս խմբագրատունը պէտք եղած տեղեկութեանց համար։

2202 4—5

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՍԵԼԱՆԻԿ, 26 Հոկտ.

Ատենէ մ'ի վեր տեղւոյս յոյն հասարակութեան մի քանի երեւելի անհատից մէջ տիրած խռովութեան համար, Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքարանի բարձրագոյն որոշմամբ, Կիւմիւլճինայի մետրապոլիտ Տ. Կոստանդինոս՝ որ այժմ Սէրէզի վիճակի Առաջնորդ անուանեալ է, ժամանեց յայսր, նաև Քեսէնտրէի Մետրապոլիտ Տ. Կոստանդինոս։

Ըստ աւուր պահանջման Տօնի, այսօր փառաւորապէս Յունաց Առաջնորդարանի կից Այա Տիմիթրի Ս. եկեղեցին հանդիսաւոր արարողութիւն կատարեցաւ, որում հրաւիրմամբ ներկայ էր նաեւ տեղւոյս հայ գաղթականութեան հոգեւոր հովիւ Արժ. Տ. Արսէն քահանայ Խաչօյեան. Սոյն հանդէս կարի ուշագրաւ էր, մանաւանդ պատարագի արարողութիւնն, որը մատուցեցան տեղւոյս Գեր. Տ. Ղրիգորիոս Առաջնորդն և վերոյիշեալ երկու եպիսկոպոսունք, Սրբազան հայրեր, ընդ որս Արտամիրայի նախորդ առաջնորդ Տ. Անթիմոս եպիսկոպոս, նաև հինգ արքիմանդրիտք, մէկ իգումէնոս, եօթն քահանայք և հինգ սարկաւագունք, ի ներկայութեան բազմախուռն ժողովրդեան։

Ցետ անմիջապէս աւարտման պատարագի արարողութեան, Նորին Գեր. Տ. Ղրիգորիոս Արքեպիսկոպոս իւր սրբազան հայրերու ներկայացուց անդ տեղւոյս հայ գաղթականութեան հոգեւոր հովիւը սիրելաբար, «Աշխատասիրե՛ Ձեր սիրելութեան կը ներկայացնեմ տեղւոյս հայ օրթոտոքս գաղթականութեան քահանան, որ օր մը պիտի վայելէք նորա այցելութիւնն ի Սէրէզ, առ ի ցրուեալ հոտի»։ Երկուստեք գոհունակութիւն. Ցետ այսորիկ ըստ սովորութեան ընդ առաջնորդութեամբ դպրաց երգեցիկ դասու եւ բազմախուռն ժողովրդեան առաջնորդարանի սրահն ելլելով, «քօլիվայի» սովորական աղօթքը կատարուելով մեկնեցան մի առ մի. Նոյն օրն ի ժամ 9, Սրբազան հայրերուն այցելեց հայ հովիւն, և սիրալիր ընդունելութիւն գտաւ. Հրաժեշտի պահուն Ն. Գերապատուութիւն Տ. Ղրիգորիոս՝ որ իւր հայասէր բնութեամբ քաջածանօթ է մերայնոց, սրտայուզեալ՝ հետեւեալ խօսքերով մեր քահանայի ճակատն համբուրեց. «Մնաք բարեաւ, տասն և հինգ օրուան համար թէեւ կը մեկնիմ, բայց յուսամ թէ, մեկզմեկ տեսնելու բարեբաղդութիւնը պիտի վայելենք»։ Ն. Գերապատուութիւն այժմ առժամանակեայ կերպիւ ի Քըլկըճ կը մեկնի վաղը մինչ ցկարգադրութիւն գործոց, ժողովրդեան ամենամեծ մասը յոյժ գոհ է Ն. Սրբազնութենէն և լիովին համակիր։

«ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԸ»Ն

ՔՆՆԱԴԱՏՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

Բ.

Ամենայաջող մասերէն մէկն է, ամենազգայուն կտորներէն մէկն է Գարեգինի իւր սիրտը Տօրթէօրին բանալը։ Տօրթէօրն առանց գիտնալու Գարեգինի բուռն սէրն առ Աստղիկ, կը բացատրէ նորա հիւանդութեան մանրամասնութիւններն և անբուժելի լինելը կ'եզրակացնէ. Գարեգին յանկարծ կ'այլափոխի, մտածել կ'սկսի, բժիշկը կը հետաքրքրուի պատճառն իմանալու. բայց նա գլխի նշանով մը միայն կը խնդրէ որ չհարցնէ. Կը վախնայ բերանը բանալու, կը վախնայ որ բերանը բացածին պէս սրտէն դուրս կը պոռթկայ իւր գաղտնիքը. զի այնքան սաստկացած էր իւր սրտի յուզում որ առանց արտասուքի բառ մը անգամ արտասանելու անկարող էր. Այս պարագային գլխով նշանացի խնդրելը «մի հարցներ, մի հարցներ․․․» հոգեկան ճիշդ նախաբան մ'է յետագայ սրտաբուխ և արտասուալից խօսքերուն. Գարեգին չէ կարող դիմանալ ինքզինքը զսպել, կ'սկսի խօսիլ և մի և նոյն ժամանակ լալ և «տղու պէս լալ»․ բայց երբ Տօրթէօրը կը նկատէ թէ «տասի մը համար այս չափ յուզուիլ․․․» այն ժամանակ Գարեգին առիւծի պէս կը մռնչէ աչերը տօքթէօրին վրայ սեւեռելով. «տասը․․․ տասը․․․», և քիչ մը յետոյ դառնալով մը պէս հեզ կը լինի և երբ աղերսարկու կը շարունակէ

մ'ի, տօքթօր, տօքթօր, ի՛նչ տասը, բայց սրտէս, հոգիէս անբաժան է, տօքթօր․․․

Մէկ րոպէի մէջ Գարեգինի հոգւոյն յուզման ելեւէջներուն ամենաճիշդ և ամենաճարտար նկարագրութիւն է այս և շատ ու շատ ազդեցիկ. Յուզուիլ և խօսելու անընդունակ լինել, խօսիլ ու խօսելով լալ սկսիլ, լալուն մէջ «տասը» բառին բողոքել իբր վիրաւորեալ ու յետոյ յանկարծ կրկին մեղմանալ և իւր սիրտը թեթեւցնելու համար արտասուախառն պատմել սկսիլ, ահա Գարեգինի հանգամանքներու մէջ գտնուած մէկ հոգեբանական պատկերը։

Քաջալերեալ այն մթութենէն որ երեկոյին յառաջացմամբ կը տիրէր սենեկին մէջ,

Գարեգին իւր կենաց դժբաղդ պատմութիւնը կը շարունակէր պատմել և երբ տօքթէօրը սենեկին լոյսը վառել կ'ուզէ, Գարեգին թող չտար, թեւէն կը բռնէ և իւր տեղը կը նստեցնէ. «կ'ուզէք իւր սեւ օրերուն պատմութիւնը մթութեան մէջ աւարտել, ոչ որ իւր շուրջը տեսնել՝ այլ ինքն իւր անձին՝ իւր սրտին խօսիլ ու խօսակից մը չը տեսնել իւր դէմ․ ի՛նչ բնական և ուղիղ ասացուած է այս։

Այս մէկ երկու կտորներով կարելի է հետեւցնել՝ որ ոգեւորութիւն, ընդգայութիւն, շարժում և գործողութիւն կը տիրեն նկարագրուած կենաց մէջ և կը կազմեն այս վէպն. Իսկ այն մէկ քանի ժամանակագրական, պատմական անկարեւոր սխալներ որք սպրդած են վէպին մէջ, երբէք չեն դպչիր նորա արժանաւորութեան և ազդեցութեան. ուստի առանց մատնանիշ ընելու զանոնք, զի վստահ եմ որ անուշադրութեան ու աճապարանքի արդիւնք են և հեղինակը լաւ կը ճանաչէ զանոնք, շնորհաւորելով զինքը կը կրկնեմ որ՝ Պ. Կամսարական մեր իրական կեանքէն իւր վէպին նիւթ առեր և մեր բարքերը ճիշդ կերպով ներկայեր է.

Գալով վէպի ուղղութեան, յայտնի բան է որ երեք դպրոցներէն այսինքն վիպական (ռօմանդիք.) իրապաշտ (ռէալիսդ) և բնապաշտ (նադիւրալիսդ) դպրոցներէն մէկուն պիտի պատկանի. Յայտնի է որ բնապաշտ դպրոցին հետեւող չէ Պ. Կամսարական, քանի որ իւր հերոսներու հոգեկան վիճակները կը նկարագրէ, քանի որ իւր վէպին մէջ ձգտում (դանտանս) կայ եւ քանի որ ընկերական կեանքի կրթիչ և որչափ կարելի է համեստ մասերը ներկայացուցած է. կը մնան վիպական և իրապաշտ դպրոցները. Վիպական կամ տեսլական ուղղութեամբ գրողներ կ'երեւակայեն ու կ'ստեղծեն իւրեանց վէպերու համար այնպիսի անձնաւորութիւններ, որոնք մեզի պէս հասարակ մահկանացուներ չեն, կը չափազանցեն, վերջապէս բնութենէն վեր կը սաւառնին.

Պ. Կամսարական իրապաշտ դպրոցին ճշմարիտ աշակերտն է, զի իրական կեանքէ առնելով իւր վէպին նիւթ, յարմար իւր ձգտման, իրական կեանքի ճիշդ պատկերը կը ներկայացնէ առանց չափազանցութեան. Նորա ներկայացուցած անձնաւորութիւններն այնչափ բնական են որ ընթերցողը կը կարծէ թէ՝ եթէ փողոցը տեսնելու լինի Անդրանիկ վարժապետը կամ Թորոս պէյը, պիտի ճանաչէ.

Օր. Նուրանիա Արեւելքի մէջ հրատարակելով մէկ յօդուած կ'ուզէ ապացուցանել թէ Սուրբիկ հանըմի անձնաւորութիւնը տեսլական է, որով վէպին ալ տեսլական լինելը կ'եզրակացնէ. Օրդ. Նուրանիա չարաչար կը սխալի. Սուրբիկ հանըմի անձնաւորութիւնը տեսլական չէ Հայոց համար. Սուրբիկ հանըմի անձով Պ. Կամսարական յաջողած է ներկայացնել հայ կնոջ իսկական պատկերը. Կանանց սեռին մէջ Հայ կինը, մասնաւորաբար գաւառացի հայ կինը, պատմական ժամանակներէ ի վեր երկնային երկիւղածութիւն մը և յարգանք մը ունի դէպի իւր ամուսինը. Իւր ամուսնէն գոհ լինել և հաւատարիմ մնալ նորան՝ հայ կնոջ ժառանգական սկզբունքն է. Զի կը հաւատայ որ Աստուած գրած է իւր ճակտին զայն. Գաւառներու մէջ հայ կիներ իւրեանց ամուսինները իրենց [illegible] տէրը կը կոչեն. Սուրբիկ Հանըմի իւր ամուսնէն գոհ լինելուն վրայ կը զարմանայ Օրդ. Նուրանիա. ապա եթէ ըսեմ որ գաւառաց մէջ հազարաւոր կիներ 10-15 տարիներ իւրեանց ամուսիններէն հեռու, շատ անգամ 5-10 տարի առանց լուր առնելու, առանց օգնութիւն մը ստանալու կ'ապրին խեղճութեամբ, և միշտ կ'աղօթեն նոցա համար և հաւատարիմ կը մնան իրենց ամուսիններուն. Պ. Կամսարականը կը շնորհաւորեմ՝ որ հայ կնոջ կեանքը այսչափ խորէն իմաստասիրելով իւր իրական վէպին համար իրական պատկեր մը ներկայացուցեր է. Օր. Նուրանիա ալ իրաւունք ունի. Մեզ այժմ շրջապատող կիներէն շատերը իւր նկարագրած Սուրբիկ հանըմին նման են և առանց խղճի կ'ըսեն ընկած վարժապետին.

«Աչկերանները [illegible] պաներ են. ինչի՞ս պատուելին ես, խաչը խայտառակ եղար հօլխին առջեւ. ալէ՞կ որ ֆռէնկներուն դպրատունն ալ հայերէն գիտցող չի գայ, չէ նէ հոնկէ ալ կը ճամբուէիր. մե՛ղք. Ա՜խ, մարս ինծի կրակը ըրեց. առջի օրէն [illegible] մէկն էիր.

Բայց դեռ կան հազարաւոր հայ կիներ՝ որոնք մեծ հաճոյութիւն կը սեպեն այս խօսքերը. Օրդ. Նուրանիա, քու նկարագրած Սուրբիկ հանըմդ, հայ Սուրբիկ հանըմի տիպ չէ, բայց դժբաղդաբար կ'աւելանան օրէ օր.

Սուրբիկ հանըմի անձնաւորութիւնն ամենէն աւելի անբնական կարծուած անձնաւորութիւնն էր, բայց իմ կարծիքով ամենէն իրական և ազգային է ինչպէս վերը բացատրեցի.

Ոմանք ալ Գարեգինի անձնաւորութիւնն անբնական կը գտնեն, առարկելով թէ Գարեգին երբ մերժուած այլ եւս չէր կարող համակրել և կարեկցիլ Աստղիկի վերայ. և այս գաղափարը շատեր ջերմաբար կը պաշտպանեն. սխալած են, զի յետ մերժման միշտ ատելութիւն չծնիր մերժուողին սրտին մէջ, երբեմն ալ համակրանք և կարեկցութիւն յառաջ կուգայ, բայց սա տարբերութեամբ որ, փոքր սիրտերու մէջ միշտ վրէժխնդրութիւն կը ծնի, մեծ սրտերու մէջ համակրութիւն.

Վարժապետին Աղջիկը իրական կեանքէ առնուած իրական վէպ է, նորա գործող անձինքն իրական մարդիկ են. Նորա մէջ պատահած դէպքերը կենաց մէջ պատահած դէպքեր են. Ինչպէս կենաց մէջ արտասուք և ժպիտ իրար խառն են, նոյնպէս ալ այս վէպին մէջ. Իրական դպրոցին նպատակը մեր իրական կեանքէն կրթիչ տեսարաններ նկարագրելով մեզ յուզել և ցնցել է. Պ. Կամսարական հասած է իւր նպատակին.

Մի վէպ իրական լինելու համար, հերիք չէ միայն որ իւր նկարագրած կեանքն իրական լինի, իւր ներկայացուցած անձնաւորութիւններն հոգեբանութեամբ և բնախօսութեամբ ճիշդ լինին, այլ անհրաժեշտ պէտք է կենդանի լեզուով հերոսներուն գործածած կենդանի ոճով ներկայացած լինին. Իրական կեանքը իրական լեզուով կը նկարագրուի. Իրապաշտ դպրոցը իւր նկարագրած կենաց լեզուն, ոճը, մինչեւ իսկ հնչիւնը պարտաւոր է իսկութեամբ ներկայացնել, հակառակ պարագային իւր ուղղութենէն շեղած կը լինի և կը կորսնցնէ իւր ազդեցութիւնն և նշանակութիւնը. Իրապաշտ դպրոցին հետեւող հեղինակներ իրաւունք չունին իւրեանց հերոսներու խօսած լեզուին ուղղութիւն տալու, այլ ընդ հակառակն, իրենք նոցա ուղղութեան պիտի հպատակեն. այս դպրոցին մէջ չէ թէ գրաւոր լեզուն ուղղութիւն կ'տայ խօսուն լեզուին, այլ խօսուն կենդանի բարբառն է որ իւր ետեւէն կը քաշէ ու կը տանի գրաւոր լեզուն. Ի՞նչու համար կը գրենք, եթէ ոչ կարդալ և հասկնալու համար. ո՞ր լեզուն աւելի լաւ կը հասկնանք. յայտնի բան է մեր ամեն օրուան գործածած լեզունիս, խօսած լեզունիս, մայրենի լեզունիս. Ուրեմն ինչո՞ւ մեր մայրենի լեզուով չգրենք մեր վիպասանութիւնները, մեր լրագիրները, մեր դասագրքերը. Թող չզարմանայ ընթերցողը երբ հայերէն լեզուով ամեն օր կը գրուին մեր գրքերը, ես ելեր կը պահանջեմ որ մայրենի լեզուով գրուին, հայերէն գրուին. Ցաւ ի սիրտ կուգամ յայտնել, սիրելի ընթերցող, որ մեր արեւմտեան գրեթէ բոլոր հայ գրականութեան [illegible] են միայն հայերէն, իսկ լեզուն, ոճը, հայերէն չեն, մայրենի չեն. Մենք չենք գրեր այն լեզուով՝ որ լեզուով որ մեր մօր հետ կը խօսինք, մեր ընտանեաց հետ կը խօսինք, մեր ընկերներուն հետ կը խօսինք. Դժբաղդաբար ուրիշ տեսակ կը խօսինք և ուրիշ տեսակ կը գրենք. այս բան ազգային մի մեծ դժբաղդութիւն է. Մեր գրականութիւն երբէք մեծ ազդեցութիւն չպիտի ունենայ ժողովրդեան վրայ վասն զի իրեն կատարելապէս հասկանալի, իւր մայրենի լեզուով գրուած չէ.

Մեր ժողովուրդ ինչո՞ւ օգուտ չը քաղեր շատ մը վարդապետներու և եպիսկոպոսներու քարոզներէ. վասն զի այն լեզուն որով կը քարոզեն իրեն հասկանալի չէ.

Մեր տղայք կը կարդան կը կարդան իւրեանց դասագիրքը, մայրենի լեզուն և չեն հասկնար. ինչո՞ւ, վասն զի անունը միայն մայրենի լեզու է, իսկ ինքը Գերմաներէնէ Ռուսերէն, Ռուսերէնէ Արեւելեան հայոց բարբառ, և Արեւելեան հայոց բարբառէ Արեւմտեան հայոց բարբառն փոխուելով միջազգային լեզու մը ունի զոր լեզուաբաններ հազիւ կրնան հասկնալ.

Ռուսահայք մեզնէ մեծ առաւելութիւն ունին այս մասին, զի կը գրեն այն լեզուով որ լեզուով որ կը խօսին, և այս պատճառաւ է որ նոցա մէջ գրականութիւնը աւելի ժողովրդական է. Եթէ Մարկոս էֆէնտի Աղաբէկեան լինէր այս տողերուն գրողը, անպատճառ կ'աւելցնէր. «Արեւելեան հայք ունին կենդանի, մայրենի լեզու, որից մենք զուրկ ենք, և այս պատճառաւ է իսկ՝ որ նոքա աւելի արագ և աւելի հաստատ քայլերով են առաջ գնում», և շատ իրաւացի նկատողութիւն առած կը լինէր. Ի սրտէ կը ձայնակցիմ նորա. Պ. Կամսարական երբ հարազատ աշակերտ իրապաշտ դպրոցին՝ լեզուի խնդիրը եւս լաւ իմաստասիրած և իւր դպրոցին պահանջած կենդանի լեզուն է գործածած, մանաւանդ իւր նկարագրած անձնաւորութեանց իրարու հետ խօսակցած լեզուն հիանալի է. այն լեզուի մէջ կեանք կ'եռայ և կենդանութիւն կը բուրէ անկէ. օրինակի համար մէջ բերեմ Գարեգինի մօր մէկ պարբերութիւնը և ընթերցողը թող ինքը դատէ նորա մէջ եղած կենդանութիւնը, անուշութիւնը.

«—Անուշիկ զաւակս, ես Աստղիկը կը ճանչնամ, աղւոր խումբրի պէս աղջիկ է, վարքը բարքը տեղը. բայց ի՞նչ ընեմ անոր մօրմանը, քիչ մը շատ ձեռքի վրայ մեծցուց աղջիկը, վախնամ որ էփուն չըլլայ, էփուն.»

Հիմա մեր դասական գրագէտները այս միտքը իւրեանց լեզուով յայտնել թող աշխատին որ այսչափ դիւրին հասկնալի լինի և միեւնոյն ժամանակ այսչափ քաղցր. Կեանքն իր լեզուով կը բացատրուի. Եթէ կ'ուզենք որ աւելի կոկիկ գրենք, նախ աւելի կոկիկ խօսինք. Պատկերն իսկականին նման կը լինի. Կոյրին պատկերն ալ կոյր կ'ըլլայ. Ահա այս տեղ կ'ընդօրինակեմ Արամի և Թորոս պէյի խօսակցութենէն մէկ կտոր որով պէյը կ'ուզէ համոզել Արամին և ետ կեցնել Աստղիկէ հետ ամուսնութենէն. Թորոս պէյ մը և Արամ մը այս լեզուով միայն կը խօսին եւ եթէ հեղինակն ուրիշ ձեւ տալու լինէր կը հեռանար իրականութենէն.

—Եւ հիմա՞.

—Հիմա պարզ է. պիտի ամուսնանամ Ֆէնէրճեանին աղջկան հետ. հարուստ չէ եղեր, ի՞նչ փոյթ. ես հա՛ հարստութեան պէտք չունիմ, ես աղւորիկ սալօն կին մը կ'ուզեմ. և Աստղիկը տեսա....

—Բայց դո՛ւն ես ինծի այսպէս խօսողը, Արամ. հաւատամ ականջներուս որ վարժապետի մը աղջկան հետ ամուսնանալ կ'ուզես.

—Իրաւունք ունիս, պէյ, կը ծաղրես զիս, այնպէս չէ՞. խենդութիւն կը համարիս ըրածս. հէ, ես ալ քեզ կը պատասխանեմ որ, ես քենէ աւելի կը խնդամ իմ վրաս, քեզ է աւելի խենդ կը համարիմ ինքզինքս, բայց...

—Բայց ի՞նչ...

—Վերջապէս՝ խոստովանիլ պիտի տաս ինծ. ուրեմն չըսածն ըսեմ. ամեն նկատումէ առաջ Աստղիկն առնել կ'ուզեմ, որովհետեւ կ'ուզեմ որ կինս ըլլայ. [illegible]. Ի՞նչ ընեմ, ձեռքս չէ. Նախ չը խոստովանեցայ, որովհետեւ գիտեմ որ սիրոյ խնդիր հանելով՝ չարաչար պիտի ծաղրես զիս ըսելով թէ դպրոցականի պէս կը խօսիմ կոր. բայց ի՞նչ ուզես ըսէ, կը սիրեմ...

—Հասկցայ, իրաւ պէտքէս եղեր. էհ, այն ատեն ըսէ նայիմ, խոստովանէ տեսնեմ, [illegible] մէջ պատմածէդ աւելի տեսարաններ պատահեցա՞ն.

—Բայց չէի՞ պատմեր քեզ.

—Լաւ. խենդութեան վայրկեանի մը մէջ ամուսնութեան խօսք տուի՞ր աղջկան.

—Ոչ, ոչ, եթէ տուած ըլլամ իսկ՝ այդ կայ եւ որութիւն չունի.

—Բայց տարակոյս չկայ, որովհետեւ դուն ինձ հազար անգամ կրկնած ես որ փոքր սենեակի մը մէջ կնոջ մը խօսք տալ՝ [illegible] մէջ խօսք տալու չը նմանիր. եւ յետոյ [illegible] մ'ալ ունինք մեր առջեւ. Ալէմ-Տաղի ալ խօսք տուինք գիշեր մը, բայց խօսք տուինք միայն.

Յետոյ պէյը վար կը զարնէ Աստղիկի յատկութիւնները և Արամ կը պաշտպանէ այսպէս.

—Պէյ, ի՞նչ պէտք է ընկերութեան մէջ մտնող կնոջ մը համար. նախ քիչ մը գեղեցկութիւն, — բայց տեսար զինքը, հրեշտակ է. յետոյ՝ վայելչութիւն, — բայց շատ [illegible] աղջիկ է. դեռ ի՞նչ պէտք է, սիրուն խօսակցութիւն մը եւ գաղղիերէն [illegible], երկուքն ալ ունի... վարժապետի աղջիկ մ'ըսեր... [illegible] մէջ, գիտեցի՞ր. Զարուհին ըսաւ որ զրոյցը ամենէն լաւ պարողն է եղեր.

—Ի՞նչ յատկութիւն համրեցիր. գեղեցկութիւն, վայելչութիւն, [illegible], այնպէս չէ՞. էհ, աւելցուր ասոնց վրայ նաև աշխատութենէ փայտ կտրած ձեռքեր, ընդմիջեց պէյը հեգնութեամբ.

—Մ'ամաչցըներ. [illegible] եթէ ինծ զզուանք ազդող բան մը կայ՝ այն ալ կանանց ձեռքին կարծրութիւնն է. բայց Աստղիկի ձեռքը... աղջիկ մը կ'արժէ, Սակայն, պէյ, կը կրկնեմ. այդ աղջիկը պիտի առնեմ, որովհետեւ առնել կ'ուզեմ. Ահաւասիկ ամենէն մեծ պատճառը.

Պ. Կամսարականի վէպը բոլորովին նոր է իւր լեզուով. այդ լեզուն իւր վէպի յաջողութեան ամենափայլուն կէտերէն մին է. դասական նախապաշարեալ խումբը ինչ կ'ուզէ թող ըսէ, իրապաշտ դպրոցը զինք կը շնորհաւորէ. Մինչդեռ ոմանք քծիծաղով մը կը նկատեն նորա լեզուի անկումը, ես սրտաբաց կը խնդրեմ Պ. հեղինակէն որ իւր լեզուն աւելի իջեցնէ և հաւասարեցնէ ժողովրդեան ընկած աստիճանին հետ. և գրէ այնպէս, ճիշդ այնպէս, ինչպէս կենդանի բարբառով, բերանացի պիտի պատմէր մեզ իւր վէպը.

Թէ նիւթին, թէ ուղղութեան և թէ լեզուին կողմանէ կատարեալ ու փառաւոր յաջողութիւն մ'ունի Պ. Կամսարականի վէպը. այս վէպ նորութիւն մ'է մեր գրականութեան մէջ իւր բոլոր կողմերով. Մեր գրականութիւն և ժողովուրդ ահագին վիհով մը իրարմէ բաժնուած են, մինչդեռ իրարու հետ միացած պիտի լինէին. կը սիրեմ հաւատալ՝ որ Վարժապետին Աղջիկը գրականութիւնն ու ժողովուրդն իրար միացնող կամուրջին առջեւ կազմող քարերէն մէկը պիտի լինի և նորա հեղինակն այդ բաղձալի գործին շինութեան անվհատ աշխատողներէն մին. Անվհատ բառը կը կրկնեմ ու կը շեշտեմ. զի կը վախնամ որ Պ Կամսարական իրեն դէմ եղած այնչափ անտեղի ու անմիտ յարձակմանց առաջ վհատի. Արեւմտեան հայ գրականութիւնը կատարելապէս չգնահատեց Վարժապետին աղջիկն, և չէր ալ կարող գնահատել. զի մեր գրականութեան ներկայացուցիչք ընդհանրապէս նախապաշարեալ դասական դպրոցին կը պատկանին. Մեծ յոյս ունիմ որ Արեւելեան հայ գրականութեան ներկայացուցիչք, ինչպէս որ արժան է, իբրեւ իրապաշտ դպրոցին հետեւողներ, պիտի քննադատեն և գնահատեն այս գործ որ ինքնին մեծ աշխատութիւն մ'է. և աւելի մեծ գործ համարելու իրաւունք ունինք զի հեղինակին առաջինն է և ընդունակ առաջնորդող լինելու մեծագոյն հեղինակութեանց.

27 Հոկտ. 1888 Ց. ՄԵՂՔԻՈՐ
Ի Բերա

ԹԱՂՏԱՏԼԵԱՆ ԴՐԱՏՈՒՆ

ԸՆԴԱՐՁԱԿ
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ, 800 ԵՐԵՍ
Հեղինակ Սիմոն Միքայէլեան
Գին 20 ղրշ.

Հաշւակալ Թուաբան հա գուցեալ Սիմոն էֆէնտի Միքայէլեանի սոյն դասագիրքը, կը պարունակէ ընդարձակ թուաբանութեան մը վերաբերեալ ամեն գործողութիւններէն զատ նաեւ բոլոր ազգաց չափերուն և կշիռներուն բաղդատական ցանկերն, անտոկոս և տոկոսաւոր հաշուըմթացներ, նշանակաց տախտակներ, երկրաչափական գործնական մաս մը, տեսակարար ծանրութեանց ազիւսակներ և այս ամենուն վրայ գործնական հազարաւոր խնդիրներ այնպէս որ չկայ թուաբանական խնդիր մը որ մարդ չի գտնէ այս թուաբանութեան մէջ.

Սոյն թուաբանութիւն իւր ձեւ, բաղմաման, ընտիր պարունակութեամբն, աղնիւ տպագրութեամբն ու լաւագոյն թղթովն ինչպէս և գնոյն անօրինակ աժանութեամբը կը մրցի նաեւ եւրոպական բոլոր նմանօրինակ հրատարակութեանց հետ. 2048

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ
1889
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Սեփականութիւն
Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցի
ԳԻՆ 40 ՓԱՐԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ (ԱՐԱՄԵԱՆ)

Կը գտնուի Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը, Կ. Պոլիս Մեծ-Նոր-Խան, միջնայարկ, Թիւ 48, 49, 50, և բոլոր հայ գրավաճառաց քով.

Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքը չկրող օրինակները վաւերական չեն. 2128

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ
ՀԱՒԱՔԱԾՈՅ ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ
Ազգային եւ օտար մատենագրաց
Աշխարհիկ լեզուաւ
ՄԱՍՆ Ա.

Սոյն հաւաքածոյ՝ որ մեր աշխարհաբար մատենագրութեան լաւագոյն հեղինակաց գործերէն ծաղկաքաղ եղած է, կը յանձնարարուի իբր եւ դասագիրք ազգ. վարժարանաց, տալու համար հայ մանկանց՝ ճաշակ զանազան ընտիր գրուածոց. Գինն է 5 դահեկան. Կը գտնուի բոլոր հայ գրավաճառաց քով. 2203 2—5

20 ՓԱՐԱՅ ՖՐԱՆՍ ՄՕՏ, Բարիզեան շաբաթաթերթ մօտայի եւ ասեղնագործութեանց. բազմաթիւ ձեւ պատկերներով, ընտիր պարունակութեամբ. կամուրջի գլուխը հայ գրավաճառաց եւ բոլոր լրագրավաճառաց մօտ. 2137 5—5

ԱԶԴ

1. Բերա Գամէր խաթուն Թաղ Գալիոնճը գուլլըղը փողոց Թիւ 97 քարուկիր տունը, որ 190 կանգուն գետին ունի և տարին 70 լիրա վարձք կը բերէ, 800 լիրայի.

2. Ղալաթիա Պերէքէթ Զատէ Թաղ Ջիւէճիա փողոց Թիւ 8 քարուկիր տունը, որ 104 կանգուն գետին ունի և տարին 36 լիրայ օսմ. վարձք կը բերէ, 300 լիրայի.

3. Ղալաթիա Սուլթան Պայէզիտ Թաղ Գապուգ Զըրմայ և Սուլթան Պայէզիտ փողոցները Թիւ 1 և 51 քարուկիր տունն և խանութն, որ 70 կանգուն գետին ունին և տարին 60 լիրայ օսմ. վարձք կը բերէ, 600 լիրայի.

Վերոյիշեալ կալուածներն՝ որ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ վագֆին լինելով մահլիւլ մնացած են, որոշուած է աճուրդի դնելով վաճառել. Արդ անոնք որք կը փափաքին աւելի գնով ծախու առնուլ, կը հրաւիրուին ներկայանալ ամեն երկուշաբթի և հինգշաբթի օրերն առաւօտները նոյն Եկեղեցւոյ կալուածոց մատակարարութեան սենեակը.

28 սեպտ. 1888 2134 7—16

ՓՈՂՈՍ Ց. ՃԻՒՆՃԻՒՀԵԱՆ
ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ
ՏԱՐԵՑՈՅՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
(Հարթաձեւ տախտակ)

Բովանդակութիւն.— Նախաբան.—Մեծ շրջանի մը (532 տարի) տարեցոյց.—Ազիւսակ՝ յորս նշանակեալ են ամեն տարւոյ շարժական տօներն, միջոցներն (օրական և շաբաթական) և հասանիք.—Հնարք.—Նշաններակք.—Կրկնակք.—Այսօր ամսոյն քանի՞ն է.—Ամսամուտ.—Օրացուց.—Անդրէասեան ձոյնագիւտ.—Ազիւսակ Գաւաթ—[illegible].—Պարզատոմար օրացոյց՝ հանդերձ շարժական մասամբք աւուրց.

Ցորմէ բազմադիմի պարագայից մէջ միշտ կրնան օգտուիլ ամեն կարգի ազգայինք եւ մանաւանդ ԸՆՏԱՆԻՔ, և որ կրնայ ծառայել նաև իբրեւ օգտակար զարդ ինչ սենեկաց, գրասենեկաց, վարժարանաց եւն.

Վաճառման կեդրոնատեղին է Գալուֆեան գրատուն, Ջաղալօղլու-Եօգուշու, Թիւ 20. Գին 5 դահեկան. 2027 7—11

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ստորագրեալս, միակ ներկայացուցիչ Կիշառ եղբարց գործարանին ի Ս. Հանրի, հանրածանօթ իւր յաճախակերպ արտադրութեանց ընտրութեամբ, մասնաւոր օսմ. կայս. կառավարութեան, երկաթուղեաց ընկերութեանց, փոխւեաց եայլն, պատիւ ունի ծանուցանել իւր յաճախորդաց թէ ոմանք անուանց նմանութենէ մը օգտուելով գինը խաբելու համար, այսպէս ուրիշ գործարանից վերագրելով այն արդար հռչակը զոր ձեռք բերած է Կիշառ եղբարց տունը.

Ստորագրեալս կը յանձնարարէ Կիշառ եղբարց տան բազմաթիւ յաճախորդներուն որ [illegible] վաճառականներուն իրենց ծախած արտադրութեանց վրայ փնտռեն հետեւեալ նշանը

Guichard Frères à St. Henry (Marseille)

եթէ կ'ուզեն ամեն կերպիւ անստգիւտ ապրանք մը ստանալու վստահ լինիլ.

ՎԻԴԱԼԻ ՄՈՒՀՕ
Ղալաթիա, Քիւրէքճիլէր, Թիւ 12
2034 17—30

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ
Վաւերացեալ
Ազգ. Կեդրոնական Վարչութեան
Ուսումնական Խորհրդէն
Յօրինեաց
Ն. ԳԱՐԹՈՒԶԵԱՆ

Սոյն ընտիր դասագիրքն որ վաւերացեալ է ազգ. կեդրոնական վարչութեան Ուսումնական խորհրդէն, կը պարունակէ, բացի թուաբանական տեսական մասէն, բազմաթիւ գործնական հրահանգներ և խնդիրներ.

Ուսանողն անոր մէջ կը գտնէ կոկիկ և ընդարձակօրէն բացատրուած չորս գործողութեանց, կոտորակաց, համեմատութեանց, մետրական դրութեան, տոկոսաց, զեղչի և հաշուընթացներու վերաբերեալ կանոնք և առաջարկութիւնք.

Սոյն դասագրքին ամենէն մեծ առաւելութիւնն է որ ամեն թուաբանական կանոն ունի իւրեն յատուկ գործնական և բնական խնդիրներ որ միշտ կիրառութեան մէջ են թէ առեւտուրի թէ արհեստից և թէ առտնին կենաց մէջ.

Երկրաչափ Թուաբանին սոյն առաջին երկին իբր դասագիրք ընդունուած է ազգ. և մասնաւոր բազմաթիւ վարժարանաց, ինչպէս նաև Հայոց ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ վարժարաններուն մէջ. կրնայ նաև օգտակար ըլլալ առեւտրով զբաղող ամեն անհատի.

Հակառակ իւր ծաւալին
Գինը 7 1/2 ղրշ.

Կեդրոնատեղին է Եւրոպական գրատուն, Ա. Պիպէռճեան, բաղ Պաղչէ [illegible] Թիւ 12, Կ. Պոլիս. 1988 19—20

ՏՈՔԹՈՐ ԶՕՀՐԱՊ

Բժիշկ Շիշլիի գաղղիական Լա-Բէ հիւանդանոցին, վաղեմի ներքին բժիշկ Լիոնի եւ Սէնթ Էդիէնի հիւանդանոցաց (ի Գաղղիա), թղթակից անդամ Լիոնի բժշկական ազգային ընկերութեան, մասնագէտ Ականջի Կոկորդի եւ Քթի հիւանդութեան. Ներքին եւ ելեկտրական դարմանոց, այցելութիւնք կ'ընդունի առաւօտներն (ժամ 10 էն 12) իւր տանն որ ի Մեծ փողոց Բանկալթի Թիւ 75, հէս օրէն վերջ ի Ստամպոլ Պահչէ գաբու Մէրճանեան գեղարանն Թիւ 18, ուր ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ. 1699 10—81

ԼՈՒԾՈՂՈՒԹԻՒՆՔ, ԹԱՆՋՔ

ԱԲԻԲՐԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐՆ այսօր ճանչցուած են գերազանց դարման մը ընդդէմ լուծողութեանց, փորհարութեան, [illegible].

ԱԲԻԲՐԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐՆ ընդունուած են նշանաւոր բժիշկներէ մայրաքաղաքիս և օտար երկրաց մէջ և կը գործածուին շատ հիւանդանոցներ.

Աբիբրի դեղահատներուն [illegible] յանձնուած է Բարիզի բժշկական Ակադեմիային և Թուրքիոյ քաղաքային բժշկական խորհրդին. այս վերջինն արտօնած է Պ. Աբիբրի այդ դեղահատները պատրաստելու և վաճառելու իրաւունքը.

Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղարան ՎԷԼԻԹ, Ղալաթիա, և մայրաքաղաքիս գլխաւոր դեղարանները. 1870

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑՔ ԹԷՅԻ
ԷՄ. ՊԱԼԱՊԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԱԾՈՒՄՆ
Չինաստանէն, Հնդկաստանէն եւ Ճաբոնէն
12 — Պօլ. Ճէլէպի խան, — 12
[illegible]
ՆԵՐԱԾՈՒՄՆ—ԱՐՏԱԾՈՒՄՆ

Քսան տարիէ ի վեր թէյի մեծաքանակ առեւտուր ընելով, գրանսելով զրկելով զայնս ի Ռուսիա և Պարսկաստան, բազմաթիւ անձանց խնդրանաց վրայ որոշեցինք քաղաքիս մէջ թէյի կեդրոնական վաճառատուն մը հաստատել «մեծաքանակ» եւ «փոքրաքանակ» վաճառմանց համար. Վաճառականք, դեղավաճառք, նպարավաճառք եւ ընտանիքներն, որք վերահաս ձմրան պատճառաւ իրենց պաշարը կը պատրաստեն, եւ անոնք որ կ'ուզեն ոչ միայն լաւ, հապա նաեւ «աժան» թէյ ունենալ, կը հրաւիրուին այցելել «Թէյի մեծ մթերանոցներն» եւ գոհ պիտի մնան. 2187

Տուփերուն վրայ պահանջել Էմ. Պալապանի եւ Ընկ. ստորագրութիւնն եւ Աքաղաղի պատկերն.

ԻԼԱՆ
ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ ՇԱՀԱՆԷ

Էրզագը ումումիյէ անպարը իչիւն ալընաճագ միւթէնէվվի տագըմին գաբարը գաթիսի Թըշրինի Սանիի րումինին իքինճի չարշէնպիհ կիւնիւ վիրիլէճէկինտէն իմալէ մալիպ օլանլարըն եէվմը մէզքիւրտէ սաաթ ալթըտան նիհայէթ տօղուզա գատար Խազինէի Խասսայի Շահանէյէ կէլմէլէրի իլան օլունուր. 2110

29 Թըշրինի էվվէլ 304 3—3

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Կը ծանուցուի հասարակութեան թէ այսօրէն սկսեալ կրնայ ամեն օր ժամ 10 էն 3 1/2 Ռումէլիի երկաթուղեաց յառաջիկայ վիճակահանութեան Ռումէններ գնել Օսմ. Կայս. Պանքայէն ի Ղալաթիա.

Կ. Պոլիս, 1 Նոյեմբեր 1888

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Գուրշունի պօյալը ասթարլըք ամէրիքան սէքիզ եիւզ թօփ, պէհէր թօփը էլլի ալթը զուրուշա.

Սէքիզ կիրահ պիր բարմագ արզընտա կէօմլէքլիք ամէրիգան պին թօփ, պէհէր լիպրասը պէշ զուրուշ օն պէշ փարայա.

Տօգուզ կիրահ արզընտա տօնլըք ամէրիգան պին թօփ, պէհէր լիպրասը պէշ զուրուշ եիրմի փարայա.

Եէտի կիրահ ալթը բարմագ արզընտա ասթարլըգ ամէրիգան պին իքի եիւզ թօփ, պէհէր լիպրասը պէշ զուրուշ օն պէշ փարայա.

Սիեահ մուշամպա եաղմուրլըգ եիւզ եիրմի ատէտ, պէհէրի սէքսէն թէօրթ զուրուշա.

Եէտի կիրահ տօգուզ բարմագ արզընտա կէօմլէքլիք վէ ասթարլըգ ամէրիգան պին թօփ, պէհէր լիպրասը պէշ զուրուշ օն պէշ փարայա.

Կիւվէզ եիւնտան մամուլ էվրօփաքէարի զալըման եիւզ ալթմըշ պին մէթրօ, պէհէր մէթրօսը տօգուզ փարայա.

Սարրաճխանէ անպարընտա պիր սէնէտէ լուզումի մրտտարլարը իմալ իթթիրիլմէք իւզրէ

Ջարխա չէքիլմէմիշ ավանիի նուհասիյէնին իմալիյէ ուճրէթի պէհէր քիլօ իչիւն եիրմի եէտի փարայա.

Ջարխա չէքիլմիշ ավանիի նուհասիյէնին իմալիյէ ուճրէթի պէհէր քիլօ իչիւն իւչ զրուշ սէքիզ փարայա.

Էլպիսէ վէ սարրաճխանէ անպարընա միւպայեա օլունաճագ պալատաէ մուրագգամ տօգուզ գալէմ էշեա ֆիհաթը մուրագգամտարը իլէ Թալիպի էօհտէսինտէ օլուպ Թըշրինի էվվէլին եէտինճի կիւնիւնէ գատար պէհէր կիւն միւնագասալէրի իճրա օլունարագ մէզքիւր կիւնտէ գարարը գաթիլէրի վիրիլէճէկինտէն իմասըլնա վէ սէքիզինճի կիւնիւ եիւզտէ պէշ թէմինաթիլէ մալիպ օլանլարըն մազամը Սէրասքէրի լէվազըմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

1 Թըշրինի սանի 1888 2217
Նօ. 1 1—3

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Միւպայեա օլունաճագ [illegible] լին գըլըէթ գատար ինկլիզ բէրլինճինին պէհէր գըլյէսի գըրգ տօղուզ փարաեա մալիպի էօհտէսինտէ օլտուղունտան իմասըլնա մալիպ օլան վէ չէրայիմինի անլամագ իսթէյէնլէրին Թըշրինի սանիի րումինին պէշինճի ճումաա իրթէսի կիւնիւնէ գատար պէհէր կիւն մազամը Սէրասքէրի լէվազըմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

29 Թըշրինի էվվէլ 1888 2215
Նօ. 52 3—3

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Էլպիսէ անպարընա միւպայեա օլունաճագ օլան Ինկիլթէրրա նէֆթէր չուխասընտան մամուլ պէշ պին ատէտ մա պաշլըգ նէֆթէրաթ եաղմուրլուգլարըն պէհէրի սէքսէն ալթը զրուշա Թալիպի էօհտէսինտէ օլուպ Թըշրինի սանինին սէքիզինճի կիւնիւնէ գատար պէհէր կիւն միւնագասասը իճրա օլունարագ մէզքիւր կիւնտէ գարարը գաթիլէրի վիրիլէճէկինտէն իմասըլնա վէ տօգուզինճի կիւնիւ եիւզտէ պէշ թէմինաթլէ մալիպ օլանլարըն մազամը Սէրասքէրի լէվազըմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

29 Թըշրինի էվվէլ 1888 2216
Նօ. 53 3—3

AU CROISSANT ‖ Օ ԳՐՈՒԱՍԱՆ
94, Յիւքսէք Գալտըրըմ, Վօյվօտայի ճատտէ, 94
ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ
Արանց, երիտասարդաց եւ տղայոց համար
Օ Գրուասան վաճառատունը ծանօթ է իւր վայելուչ և հաստատուն հանդերձներով.
Օ Գրուասան վաճառատունը ծանօթ է իբր ամեն տեղէ աւելի աժան վաճառող.
Աժանագին Ցուցակ

Ամբողջ քոսթիւմ, կապոյտ, սեւ- չագանակագոյն կամ ֆանթեզի շէվիոթ. զուտ բուրդ, լաւ կարուածք, խնամօք կարուած	32 Ֆրանք
Պանթալոն և ժիլէ կամ Ռըտինկօթ և ժիլէ՝ Ռուսական ֆասոնէ կամ գծաւոր, վերջին նորաձեւութիւն	38 Ֆրանք
Գծաւոր պանթալոն, հաստատութիւնն երաշխաւորեալ, վերջին նորելուկ	13 Ֆրանք
Բարտըսիւ միօրինակ կամ գծաւոր, վայելուչ կարուածք, մեծ խնամքով կարուած	36 Ֆրանք

1506

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

«ՖԻՆԻՔՍ»

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետեարք Անգղիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 16,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 1799

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ սու[illegible]բագրելոց, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. միակ գործակալք ի Պոլիս և ի Շրջակայս
Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆրանք	8,000,000
Պահեստի դրամ աւելի քան	»	4,000,000
Տարեկան հասոյթ » »	»	7,500,000

Ընկերութիւնքս **ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ** կ'ապահովագրեն մթերանոցներու և բնակութեանց մէջ վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆրանք 6,250,000 Պահեստի դրամ ֆրանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այս նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆրանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պաղչէ—Գաբու, Եօւկլիատուխ խան.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եւրոպեան առաջնակարգ դրամատուներ ցոյց պիտի տրուին անոնց, որք Ընկերութեանցս վրայ տեղեկանալ կը փափաքին։ 2176

Այն անձինք որ կը ճանչնան
DEHAUT ՏԷՅՕԻ
ԴԵՂԱՀԱՏԵՐԸ
իրենց ստամոքսը մաքրելու համար լոկ այդ դեղահատերը կը գործածեն, որք ո՛չ նողկանք եւ ո՛չ յոգնութիւն կը պատճառեն, որովհետեւ հակառակ միւս մաքրողական դեղերուն, այս դեղն այն ատեն միայն կը ներգործէ երբ լաւ կերակրոց և կազդուրիչ ըմպելեաց հետ առնուի, ինչպէս գինի, խաւուծ, թէյ։ Ամեն ոք կ'ընտրէ իրեն յարմար ժամն, ըստ իւր զբաղմանց։ Դեղն յոգնութիւն [illegible] բնաւ, այնպէս որ մարդ սիրով կ'ուզէ գործածել։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍ

ԱՀԱԳԻՆ ԶԵՂՉՈՎ

Պ. ՄԷՅՖՐԸ

Ժ. ՏԷԼՈՐՄ, ՅԱՋՈՐԴ (Օ ՎԻԼ ՏԸ ՖՐԱՆՍ)

3, Սորիանճըլար փողոց, Ղալաթիա

Վաճառումն սկսած է Նոյեմբեր 5/17ին

Ծան. Բոլոր գիները նշանակուած են զրուցով.

Գտակներ, Գուլպայ, Բաճկոնակ, Հովանոց, Գաւազան, Բարիզեան չայիկ, Ամեն տեսակ փոքդոստ, Կրինօլին ձեռնոց, Մատամբոլ, Ֆլանէլ, Ծածկոցք, Մէրինոս, Թաշկինակ, Ծաղկողութեան առարկայք, Արնոտիք, Կոշկայ առարկայներ, Գոհարեղէնք և Արծաթեայ ժամացոյցք եւ եւ.

10 % զեղչ այն ամեն ապրանաց վրայ որոց գները չեն նշանակուած ցրուեալ Ազդագրերուն վրայ։

2135 Ժ. ՏԷԼՈՐՄ
25—26 Յաջորդ Պ. ՄԷՅՖՐԻ

ՄԻ ԳՆԷՔ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ

ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԷՍ ՏԵՍՆԵԼՈՒ

ՍԻՆԿԷՐ

Ամերիկեան գործարանի մեծ մթերանոցներն
Ի ՂԱԼԱԹԻԱ, Նիւքայէ Պօսթըր,
120
Քարաքէօյի աղբիւրին դէմ.
Ի ՊԵՐԱ, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ
Ի ՊՈԼԻՍ, Մահմուտ փաշա, 90

Ուրիշ ամեն տեղ՝ «Սինկէր»ի կարի մեքենային «կեղծերը» միայն պիտի գտնէք։

ՎՃԱՐՄԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ
([illegible]) 1761

ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ի ՊԱՏՕՂԼ ՀԱՌԻՋ

ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ՅՕԳՈՒՇՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Սոյն կազմատան մէջ կան Եւրոպական նորընտիր և կատարելագործեալ մեքենաներ որոնցմով կը կազմուին և կը յօրինուին

ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ.

ԳԻՐՔԵՐ գեղեցիկ և հաստատուն
ՏՈՒՄԱՐՆԵՐ, վաճառականական եւ
ԱՑՑՆՏՕՄՍՆԵՐ, խիստ մաքուր և ընտիր։

Յաճախորդաց դիւրութեան համար կազմատունը ունի իրեն կցորդ վաճառատուն մը Թիւ 27 Ֆինճանճըլար-Եօգուշը, ուր կ'ընդունուին յանձնարարութիւնք և ուր կը վաճառուին նաեւ գրագրական ամեն տեսակ պիտոյք, ընտիր թուղթ գրիչ, թանաք, պայուսակ, գրապանակ եւ եւ. 736

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԴԱՌԼԸՄԱՆ ԵՒ Պ. ՌՈՒՄՊԼԸՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջազգային Թղթատարատան վրայի յարկը

Սոյն վաճառատան մէջ խիստ աժան գներով կը վաճառուին ամեն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրինոցներ, տղայոց համար հագուստներ, կէս շրջազգեստներ, քօսէններ, օթոցի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, Թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ։

Այս ապրանքներ, որոց ամէնքն ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին թէ՛ փոքր և թէ մեծ քանակութեամբ։

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիէննայի և Պերլինի յատուկ գործարանաց մէջ։ Նոյնպէս Անգլիաէն, Իտալիաէն և եւրոպական ուրիշ երկիրներէ եւս ապրանքներ կը բերուին։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարէնք փոխանակագրով և կամ թղթատարական դրոշմով ղրկուի։

Չը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և ստակը ետ կը տրուի զեղչելով փոխադրութեան ծախքը։ 1180

ՌՈՒՍԵՒԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲԱՌՈՒՉՈՒԿ ՄՈՒՃԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ի ՊԵՏՐՍՊՈՒՐԿ

1860 Т.Р.А.Р.М. С.ПЕТЕРБУРГ.

ТОВАРИЩ. РОСС. АМЕРИКАНСК. РЕЗИН. МАНУФАКТ.

RUSSIAN-AMERICAN INDIA RUBBER C°

Յառաջագրեալս, ներկայացուցիչ յիշեալ գործարանին, պատիւ ունիմ ծանուցանել հասարակութեան թէ տեսնելով այն յաջողութիւնը զոր ունեցած են ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՌՈՒՉՈՒԿ ՄՈՒՃԱԿՆԵՐՆ իրենց փայլկունութեան և հաստատութեան պատճառաւ, անոնց շատ մը կեղծերը շինուած են, եւ հետեւաբար անոնք որք կ'ուզեն բուն ՃՇՄԱՐԻՏ ՄՈՒՃԱԿՆԵՐԸ գնել, պարտին ուշադրութիւն ընել գործարանի նշաններուն որք դրուած են մուճակներուն ներքանին վրայ։

Փոքրաքանակ կը ծախուի բոլոր կօշկակարաց քով Լ. Ճ. ՄԷՐՃԱՆՈՖ
Պաղչէ-Գաբու, Պոլիս, Ներկայացուցիչ ընկերութեան՝
14—25 2085 մեծաքանակ վաճառման համար։

Հ. ԼԱՆԺ

ՄԻԱԿ ՄԹԵՐԱՆՈՑ ԳԱԼՈՐԻՖԷՐՆԵՐՈՒ



ՌՈՒԻԹ ՀԷՊԻՒՐՉ ՎԻԵՆՆԱ

24, [illegible], 32, Մահմուտիյէ [illegible]

ՎԱՌԱՐԱՆՔ ԵՒ ԾԽՆԵԼՈՅՔ
Նորագիւտեան առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ՋՄԻՆԷՆԵՐ
Կրակարանի վերաբերեալ մանր առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԻՆԵՐ
(Պղնձէ, ձուլածոյ և թիթեղէ երկաթէ)

ԵՐԿԱԹԵԱՑ ՄԱՆՐ ԳՈՐԾԻՔ
Ամեն տեսակ գործիք—Շինուածական

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ
Տատանոցք-Կշռորդք-Ցորենի կշռորդ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԱՆԱԿՆԵՐ

ՃՈՒԽ ՀԱՒԱՔԱՆՈՑ ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ



ՑԱԽՃԱՊԱԿԻԷ, ԹԱՓՓՈՒԷ ևն.

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 676

ԳՈՐԾԱՐԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ

Ա. ԼԷՍՔԻՒԼԱՔ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՐԻԶՆԵՐ
ԿԱՄ
ՓԱՅՏԻ ՄԱՆԱԾՈՅԷ ԿԱՊԵՐ
ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
Կառավարութենէն արտօնեալ Ֆրանսայի եւ օտար երկրաց մէջ
Յանձնարարեալ բոլոր բժիշկներէն

Այս կապերն յարմարագոյն դատուած են թէ՛ բժիշկներէն և թէ՛ զայն գործածող կիներէն։

Այս նոր կապերուն առաւելութիւնները հետեւեալներն են.

1. Ծծելու ուժոր կարողութիւն, այնպէս որ մէկ կապ մը կը բաւէ այնտեղ ուր առաջ բազմաթիւ կապեր անհրաժեշտ էին։ (Փայտի մանածոյն իւր ծանրութեան 12 անգամը կը ծծէ.)

2. Փայտեայ մանածոյին մասնաւոր յատկութիւնն է հականեխութիւնը։

3. Կապը միայն [illegible] է և հանապազ [illegible]։

4. Հեղուկ [illegible] կարենալով ազատօրէն շրջիլ, մինչ չոր կը մնան գործածութեան միջոցին։

5. Այս կապերը դիւրաւ կրնան դրուիլ և հանուիլ։ Կը բաւէ [illegible] մի կապել երկու ծայրերէն։

6. Այս կապերուն ՉԱՓԱԶԱՆՑ ԱԺԱՆՈՒԹԵԱՆ պատճառաւ կարելի է մէկ մի նետել գործածութենէն յետոյ, որ ճերմակեղէնի մաքրութեան և խնայողութեան տեսակէտով շատ կարեւոր է։

Կ. Պոլսոյ մէջ կեդրոնատեղիքն են Դեղարան Տէլլա Սուտա, Փաթիւս Սըլավոյ, Ֆրանսուա Բանզոլ, Բրիտանական դեղարան և Պ. Անտոպուլոս, (Պէրա), Ս. [illegible], Թիթոս և Աքէսիլօփուլոս (Ղալաթիա), Տ. և Մ. Մէլքի, Ժ. Արէլ (Պոլիս)։

Պ. Հ. Հարթմանի և Քիւլ. Նկի գործարանն ի Հայտնէմ՝ մասնաւորապէս կը յանձնարարուի բժշկաց և դեղագործաց՝ իւր վիրաբուժական զանազան կերպասներուն, քիմիական այլ և այլ պատրաստութեանց համար, ինչպէս և վիրաբուժութեան և դեղագործութեան մէջ գործածեալ զանազան առարկայից պատճառաւ։

Այս բոլոր նիւթերը կը գտնուին վերոյիշեալ դեղատանց մէջ։

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալն է Ցէյէր Պէսէ. Ֆընտըգլեան խան, Պոլիս։ 1922 16—26

[illegible]

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԴԵՂՈՐԷՅԻ

Ժ. ԱԼԷՔԵԱՆ

Մատակարար Օսմանեան Ծովային Նախարարութեան

(Պահչէ Գաբու Ճէլալ Պէյ խանի դէմ, Թիւ 2)

Ըստ խնդրանաց ազգիս յաճախորդաց, այս անգամ մթերանոցս մէջ ճիւղ մը հաստատած եմ լուսանկարաց վերաբերեալ ամեն պիտոյից համար։ Յաճախորդք խիստ գոհ պիտի մնան թէ՛ վաճառաց մաքրութեան եւ թէ գնոց չափաւորութեան մասին. վաճառատանս մէջ կը գտնուին Մոնքոլֆէի չոր բլաքները նոյն իսկ Բարիզի հռչակաւոր տան՝ Վիէննայի եւ Բարիզի ցուցահանդէսներէ ոսկի եւ արծաթ չքանշաններով օժտեալ է՝ Ֆալէրի չոր բլաքներն որ Պոլսոյ մէջ գտնուած բոլոր բլաքները կը գերազանցեն, ինչպէս Պոլսոյ պատուարժան լուսանկարք փորձով հաստատած են. կը գտնուի օպժէքթիֆ [illegible] եւ քարթօն, ալպիւմինի լաւ տեսակ թուղթեր, բռոմիւրէ եւ ապակէ եւ քարթօն [illegible] բիւվէթներ, մանիէզիւմի լարեր եւ գունաւոր լապտերներ ու շուշներ եւ ամեն տեսակ դեղորայք։

Ֆալէրի բլաքները փորձել ուզող Պոլսոյ եւ գաւառաց լուսանկարք կրնան օրինակ ստանալ ձրիաբար եւ անմուծ փորձել սոյն բլաքները։

Մթերանոցս Ֆալէրի եւ Մոնքոլֆէի բլաքներուն Պոլսոյ եւ Արեւելեան Ռումէլիի համար միմիայն կեդրոնատեղին է։ 1668

Արտօնատէր Ս. ՏՕՄԱՍԵԱՆ

ՏՊԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

Guerlain de Paris.

15, *Rue de la Paix*.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, ածելու արդուզարդի համար։ Ambrosial cream, ածառուէ [illegible] մորթը համար։ Crême de Fraises մորթը կակուղցնելու համար. Poudre de Cypris ողորկցնելու եւ ճերմկցնելու համար մորթը. Stilboïde փայլ տալու համար մազերուն և մօրուքին. au Athénienne et Eau lustrale հոտ խնկելու և մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակռաներու համար. Eau de Chypre արդուզարդի համար։ Թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. Imperial Russe. 1808 25—26

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ



ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 10 Նոյեմբեր (Ն. Տ.) 1888, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	6	52	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	2								
	Առաւօտ									Իրիկուն																
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 35	7 —	7 51	8 30	9 20	10 5	10 34	11 15	12 —	1 10	2 35	3 40	4 30	5 ...	5 30	6 ...	6 40	8 15	...	...	...	...	...	...	...	...
Գում—գաբու	6 45	7 13	8 08	8 39	9 29	10 14	10 43	11 24	12 09	1 19	2 44	3 49	4 39	5 9	5 39	6 9	6 49	...	...	...	...	...	...	...	...	...
Եէնի—գաբու	6 49	...	8 12	8 43	9 33	10 18	10 47	11 28	12 13	1 23	2 48	3 53	4 43	5 13	5 43	6 13	6 53	...	...	...	...	...	...	...	...	...
Տավուտ փաշա	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...		...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 55	...	8 18	8 49	9 39	10 24	11 53	11 34	12 19	1 29	2 54	3 59	4 49	5 19	5 49	6 19	6 59	...	...	...	...	...	...	...	...	...
Եէտի—գուլէ	7 01	7 26	8 24	8 54	9 44	10 29	11 56	11 39	12 22	1 33	2 59	4 4	4 54	5 23	5 54	6 24	7 5	...	...	...	...	...	...	...	...	...
Մագրիգիւղ	7 18	7 50	8 35	9 6	9 55	10 41	— ...	11 51	— ...	1 45	3 10	4 16	5 6	5 34	6 6	6 35	7 19	...	...	...	...	...	...	...	...	...
Այ Ստեֆանօ	7 27	8 3	...	9 15	...	10 50	— ...	12 2	— ...	1 54	...	4 25	5 15	...	6 17	...	7 28	...	...	...	...	...	...	...	...	...
Քիւչիւք Չէք	...	8 13	...	...	...	... ...	— ...	12 10	— ...	...	...	...	...	...	6 25	...	⋮	...	...	...	...	...	...	...	...	...
....	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	5	7	9	1	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	51							
	Առաւօտ										Իրիկուն															
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք	...	6 55	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	...	1 27	...	...	...	...	...	...	6 54	...	...	...	...	...	...	...
Այ Ստեֆանօ	6 35	7 5	...	...	8 1	...	9 20	... ...	... ...	11 15	...	1 36	2 35	...	4 30	5 30	...	...	7 7	...	...	...	...	...	...	...
Մագրիգիւղ	6 46	7 15	7 40	...	8 11	8 40	9 30	10 15	... ...	11 25	...	1 46	2 45	3 50	4 40	5 40	6 10	6 50	7 24	...	...	...	...	...	...	...
Եէտի—գուլէ	7 ...	7 28	7 51	...	8 24	8 54	9 43	10 28	11 9	11 38	1 4	1 58	2 59	4 4	4 54	5 54	6 24	7 4	7 44	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	7 4	7 32	...	...	8 28	8 58	9 47	10 32	11 13	11 42	1 8	2 2	3 3	4 9	4 58	5 58	...	7 8	...	...	...	...	...	...	...	...
Տավուտ փաշա	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Եէնի—գաբու	7 10	7 38	...	...	8 34	9 4	9 53	10 38	11 19	11 48	1 14	2 8	3 9	4 16	5 4	6 4	...	7 14	...	...	...	...	...	...	...	...
Գում—գաբու	7 15	7 42	7 59	...	8 38	9 8	9 57	10 42	11 23	11 52	1 18	2 12	3 13	4 22	5 8	6 8	6 32	7 18	8 2	...	...	...	...	...	...	...
Կ. Պոլիս	7 23	7 50	8 7	8 15	8 46	9 16	10 5	10 50	11 31	12 ...	1 26	2 20	3 21	4 30	5 16	6 16	6 40	7 28	8 16	—	...	...	...	...	...	...
....	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրի գիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին. Թիւ 1 և 2 կառախումբերն ունին Ա, Բ, և Գ [illegible]